ՏԵՂԵԿԱԳԻՐ ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР

Հասարակական գիտություններ 1948, № 7 *Общественные науки*

Գ. Ղարիբջանյան

ԱԼԵՔՍԱՆԴՐՈՊՈԼԻ ԲՈԼՇԵՎԻԿՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆԸ 1917—1918 Թ.Թ.

Բոլշևիկների Ալեքսանդրոպոլի (Լենինական) կազմակերպությունը Լենինի—Ստալինի մեծ պարտիայի հնագույն ջոկատներից է։

Սոցիալ-դեմոկրատական աշխատանքներն Ալեքսանդրոպոլում սկըսվում են դեռևս 20-րդ դարի սկզբներից։ 1904 թվի վերջին Ալեքսանդրոպոլում արդեն գործում էր ՌՍԴԻՊ կազմակերպություն՝ բոլշեիկյան թեքումով։

1905—1907 թվականներին՝ ռուսական առաջին ռեոլուցիայի շրջանում, Ալեքսանդրոպոլի բոլշևիկները՝ մեծ Ստալինի և նրա մերձավոր զինակիցներ ու աշակերտներ Ս. Շահումյանի և Ս. Օպանդարյանի ցուցումներով ու ղեկավարությամբ կազմակերպում ե գլխավորում են քաղաքի բանվորների ու զինվորների ռևոլուցիոն պայքարը՝ ցարական ինքնակալության տապալման, պրոլետարիատի ու գյուղացիության ռեոլուցիոն-դեմոկրատական դիկտատուրայի նվաճման համար։

Ստոլիպինյան դաժան ռեակցիայի ժամանակաշրջանում ՌՍԴԲՊ Ալեքսանդրոպոլի կազմակերպությունը, ենթարկվելով ցարական կառավարության խիստ հետապնդումներին ու հարձակումներին, ժամանակավորապես դադարում է գործելուց։

Համաշխարհային իմպերիալիստական պատերազմի տարիներին Ալեքսանդրոպոլը դառնում է Կովկասյան ռազմաճակատի հանգուցային կենտրոններից մեկը և ստանում ռազմական ու քաղաքական կարևոր նշանակություն։

1917 Թ. փետրվարյան բուրժուա-դեմոկրատական ռևոլուցիայի շրջանում Ալեքսանդրոպոլն ուներ բավականին խոշոր կայազոր՝ մոտ 25 000 զինվորով և երկաթուղային պրոլետարիատի փոքրիկ (մոտ հազար բանվոր), բայց ռևոլուցիոն ջոկատ։

Այս պատճառով էլ, ռևոլուցիոն նոր վերելքի ժամանակաշրջանում վերականգնելով ու ընդլայնելով իրենց պարտիական կազմակերպությունները, Անդրկովկասի բոլշևիկներն առանձնակի ուշադրություն են դարձնում նաև Ալեքսանդրոպոլի վրա։

1916 թվականին, ՌԱԴԲ(բ)Պ Կովկասյան բյուրոյի հանձնարարականով, Ալեքսանդրոպոլում ռևոլուցիոն աշխատանք կատարող բոլշևիկներ՝ Պյոտր Արվելաձեն և Բագրատ Ղարիբջանյանը ձեռնամուխ են լինում բոլշևիկների Ալեքսանդրոպոլի կազմակերպության վերականգնման գործին։ Նրանց եռանդուն գործունեության շնորհիվ Ալեքսանդրոպոլում շուտով ձևավորվում է բոլշևիկյան խումբ, որն զգալի ազդեցություն ձեռք բերելով մասսաների վրա՝ նախապատրաստում է նրանց գալիք ռևոլուցիոն մարտերին։

* * *

Պետրոգրադում փետրվարյան ռևոլուցիայի հաղթանակի լուրը ոտքի է հանում ինչպես ամբողջ Ռուսաստանի, այնպես էլ Ալեքսանդրոպոլի բանվորներին ու զինվորներին։ Ռևոլուցիայի հետևանքով ստեղծվում են իշխանության նոր օրգաններ՝ բանվորների, զինվորների ու գյուղացիների դեպուտատների Սովետներ, Գործադիր կոմիտեներ և այլն։

1917 թ. մարտի 8-ին բոլշևիկների նախաձեռնությամբ Ալեքսանդրոպոլում կազմակերպվում է կայազորի զինվորների դեպուտատների Սովետ՝ բաղկացած 18 հոգուց (10 զինվոր, 8 սպա)։[1]

Նույն օրը բազմամարդ միտինգից հետո Ալեքսանդրոպոլի Ժողովրդական տանը հրավիրվում է ժողով, որտեղ Ռուսաստանի մյուս քաղաքների օրինակով ընտրվում է «Հասարակական անվտանգության կոմիտե» բաղկացած 84 հոգուց։ Միաժամանակ կազմվում է նաև Գործադիր Կոմիտե, որի մեջ մտնում են տասական ներկայացուցիչ Ալեքսանդրոպոլի կայազորի զինվորների դեպուտատների Սովետից, տեղական բանվորներից և քաղաքացիներից, մեկ ներկայացուցիչ քաղաքի մահմեդական բնակչությունից և երկուական ներկայացուցիչ տարբեր պարտիական խմբերից (սոցիալ-դեմոկրատներ, էսեռներ, դաշնակներ և հնչակյաններ)։[2]

Մասսաների ճնշման տակ Գործադիր Կոմիտեն իրագործում է մի շարք ռևոլուցիոն միջոցառումներ՝ ձերբակալում է քաղաքի ոստիկանությանը և ժանդարմերիային, բռնագրավում է նրանց զենքերն ու գործերը, զինվորական մասերից կազմակերպում է ժամանակավոր միլիցիա և այլն։

Փետրվարյան ռևոլուցիայի դեպքերի ազդեցությամբ, մարտի վերջին Ալեքսանդրոպոլում կազմակերպվում է նաև բանվորների դեպուտատների Սովետ, որն ապրիլի սկզբներին միանում է զինվորների դեպուտատների Սովետի հետ և ստեղծվում է բանվորների ու զինվորների միացյալ Սովետ՝ գյուղացիական սեկցիայով։ Այս Սովետն ընտրում է Գործադիր կոմիտե, որը 1917 թ. ապրիլի վերջերից սկսում է հրատարակել իր պաշտոնական օրգան «Ռաբոչի ի սոլդատ» թերթը։

Ալեքսանդրոպոլի տեղական իշխանության այս երկու օրգաններում էլ ղեկավար դերը հենց սկզբից անցնում է կոնտրռևոլուցիոն տարբերին՝ էսեռո-մենշեիկյան և դաշնակցական կազմակերպությունների ներկայացուցիչներին։

Փետրվարյան ռևոլուցիայից հետո Սովետներում էսեռների ու մենշևիկների մեծամասնություն կազմելը և հաղթանակած բանվորների ու գյուղացիների կողմից իշխանությունը կամովին բուրժուազիայի ներկայացուցիչներին հանձնելը՝ Լենինը բացատրում է նաև նրանով, որ արթնացել և դեպի քաղաքականություն էին շարժվում «... միլիոնավոր մարդիկ, որոնք քաղաքականության մեջ անփորձ էին։ Դրանք մեծ մասամբ մանր տնտեսատերեր էին, գյուղացիներ, բանվորներ, որոնք մոտիկ անցյալում գյուղացիներ էին եղել, մարդիկ, որոնք կանգնած էին բուրժուազիայի ու պրոլետարիատի արանքում»։[3]

---

[1] «ՀՀՀ» (էսեռական թերթ, որը լույս էր տեսնում Ալեքսանդրոպոլում 1917 թ.) 1917 թ. № 1։

[2] Նույն տեղում։

[3] Համ Կ (բ) Պ պատմություն. Համառոտ դասընթաց. Երևան, 1946 թ. էջ 245—246։

Լենինի այս մտքերն ամբողջովին կիրառելի են նաև Ալեքսանդրոպոլի վերաբերյալ։ Վերջինս՝ լինելով մանր բուրժուական, գերազանցապես առևտրա-արհեստագործական քաղաք, իր մանր տնտեսատիրական բնակչության ճնշող մեծամասնությամբ նպաստավոր պայմաններ ու պարարտ հող է ստեղծում քաղաքականության նկատմամբ մանր բուրժուական հայացքների տարածման համար։ Այս պատճառով էլ Ալեքսանդրոպոլում գործող կոնտրռևոլուցիոն ուժերին սկզբնական շրջանում հաջողվում է քաղաքի բնակչությանը և կայազորի զինվորներին տանել իրենց հետևից և խաբել նրանց համաձայնողական քաղաքականությամբ։

Փետրվարյան ռևոլուցիայից հետո ստեղծված այս յուրահատուկ պայմաններում բոլշևիկների պարտիայի, ինչպես նաև Ալեքսանդրոպոլի բոլշևիկների առաջ կարևորագույն խնդիր էր ծառացած՝ իրենց կողմը նվաճել մասսաներին, բացահայտել բուրժուական ժամանակավոր կառավարության իմպերիալիստական բնույթը, մերկացնել կոնտրռևոլուցիոն պարտիաների դավաճանությունը և ցույց տալ, որ ժողովուրդը չի ստանա ոչ հաշտություն, ոչ հող, ոչ հաց առանց ամբողջ իշխանությունը Սովետներին հանձնելու։

Բոլշևիկների պարտիան ամբողջ եռանդով ձեռնամուխ է լինում այս աշխատանքներին։

Իրենց ամբողջովին այս գործին են նվիրում նաև Ալեքսանդրոպոլի բոլշևիկները, որոնք ռևոլուցիայից հետո Լենինի-Ստալինի մեծ պարտիայի մյուս բոլոր կազմակերպությունների հետ միասին դուրս գալով ընդհատակից, սկսում են քաղաքական ու կազմակերպական բացահայտ աշխատանք ծավալել։

Ինչպես հայտնի է, 1912 թ. հունվարին տեղի ունեցած ՌՍԴԲՊ Պրագայի կոնֆերանսում մենշևիկները դուրս վռնդվեցին պարտիայի շարքերից և ընդմիշտ վերջ տրվեց բոլշևիկների ու մենշևիկների ձևական միավորմանը։ «Պրագայի կոնֆերանսը սկիզբը դրեց նոր տիպի պարտիային, լենինիզմի պարտիային, բոլշեվիկյան պարտիային»[1]։

Իմպերիալիստական պատերազմի տարիներին և փետրվարյան ռևոլուցիայի շրջանում Լենինն ու Ստալինը բազմիցս նախազգուշացնում էին պարտիային, որ բոլշևիկների ամեն տեսակի միավորում մենշևիկների հետ ֆասակար է ու կործանարար։

Հակառակ այս բոլորին, և որպես հետևանք Թիֆլիսի բոլշևիկների խմբի (Ֆ. Մախարաձե և ուրիշներ) ու նրանց համախոհների օպորտունիստական, հաշտվողական դիրքի, Անդրկովկասի մի շարք վայրերում, այդ թվում նաև Ալեքսանդրոպոլում, փետրվարյան ռևոլուցիայից հետո ստեղծվում են բոլշևիկների ու մենշևիկների միացյալ կազմակերպություններ։

Այս միավորումը տակտիկական խոշոր սխալ էր։ Նա խիստ բացասական դեր խաղաց, որովհետև քողարկում էր մենշևիկների կոնարռևոլուցիոն, դավաճանական քաղաքականությունը։

Բոլշևիկների ու մենշևիկների կազմակերպչական «միավորման» առաջին իսկ օրերից տարաձայնությունները նրանց միջև գնալով սրվում են։ Ալեքսանդրոպոլում, ինչպես և մյուս վայրերում «միավորումն» ստա-

[1] Համ Կ (բ) Կ Պատմություն. Համառոտ դասընթաց, էջ 109։

նում է ձևական բնույթ։ Իրականում Ալեքսանդրոպոլի բոլշևիկները՝ կատարելով Լենինի և Ստալինի ցուցումները, իրենց շարքերում գտնված անձնվեր, հավատարիմ ու ռևոլուցիոն պայքարի փորձ ունեցող բոլշևիկներ Պյոտր Արվելաձեի, Բագրատ Ղարիբջանյանի և Գեվորգ Աթաբեկյանի ղեկավարությամբ հենց սկզբից վարում են ինքնուրույն պարտիական աշխատանք։

Նրանք հերոսական գործունեություն՝ են ծավալում՝ մասսաներին աստիճանաբար ազատագրելով դաշնակների, մենշևիկների և էսեռների կոնտրռևոլուցիոն ազդեցությունից և համախմբելով նրանց բոլշևիկների պարտիայի շուրջը։

* * *

Ալեքսանդրոպոլի բոլշևիկների գործունեությունը նոր կողմնորոշում ու թափ է ստանում 1917 թ. ապրիլի կեսերից, երբ նրանք ստանում են Լենինի Ապրիլյան թեզիսները, իսկ քիչ հետո նաև ՌՍԴԲ(բ)Պ 7-րդ (ապրիլյան) կոնֆերանսի որոշումները։

Ապրիլյան թեզիսներով Լենինը նոր էջ էր բաց անում բոլշևիկների պարտիայի պատմության մեջ։

«Լենինի Ապրիլյան թեզիսները տալիս էին բուրժուա-դեմոկրատական ռևոլուցիայից սոցիալիստական ռևոլուցիային անցնելու համար, ռևոլուցիայի առաջին էտապից երկրորդ էտապին՝ սոցիալիստական ռեոլուցիայի էտապին անցնելու համար պարտիայի սղելիք պայքարի հանճարեղ պլանը»։[1]

Իրականացնելով Լենինի Ապրիլյան թեզիսների և պարտիայի 7-րդ կոնֆերանսի պահանջները, Ալեքսանդրոպոլի բոլշևիկները ամենուրեք և բոլոր միջոցներով՝ մամուլում և ժողովներում, դեմոնստրացիաներում և միտինգներում անողոքաբար մերկացնում են դաշնակների, մենշևիկների, էսեռների և հակաբոլշևիկյան այլ պարտիաների կոնտրռևոլուցիոն քաղաքականությունը և մասսաներին առաջնորդում են դեպի սոցիալիստական ռևոլուցիա։

Այս կարևորագույն խնդիրների իրականացման գործում Ալեքսանդրոպոլի բոլշևիկներին մեծ օգնություն են ցույց տալիս «Ռաբոչի ի սոլդատ» և «Նոր կյանք» թերթերը։

«Ռաբոչի ի սոլտատ» լրագրում պարբերաբար տպագրվում են Ռ. Ղարիբջանյանի, Պ. Արվելաձեի և այլ բոլշևիկների բազմաթիվ հոդվածներ, որոնց մեջ նրանք բոլշևիկին հատուկ կրքոտությամբ պաշտպանում ու ագիտացիա են անում Մարքս-Լենինյան ուսմունքը՝ ռևոլուցիայի, պատերազմի, խաղաղության, ագրարային ու ազգային հարցերի մասին և միաժամանակ նկարագրելով երկրի կյանքում տեղի ունեցող քաղաքական կարևորագույն իրադարձությունները՝ տալիս են նրանց մարքսիստական գնահատականներ։[2]

«Նոր կյանքը» Ալեքսանդրոպոլում հրատարակված առաջին բոլշևիկյան թերթն էր[3]։

---

[1] Համ Կ (բ) Պ պատմություն, Համառոտ դասընթաց, էջ 253։

[2] Տես ՀԿ(բ)Պ ԿԿ Պարտարխիվ. Ղարիբջանյանի ֆոնդ (№ 9), անտ № 14։

[3] «Նոր կյանքի» կոմպլեկտը գտնվում է ՀԿ(բ)Պ ԿԿ Պարտարխիվի գրադարանում։

Նա սկսում է լույս տեսնել 1917 թ. հունիսի 22-ից, որպես ՌՍԴԲԿ Ալեքսանդրոպոլի կազմակերպության օրգան, բայց նրանում հենց սկզբից ղեկավար դեր են խաղում բոլշևիկները։

Բանվորները, զինվորները և գյուղացիները բերկրանքի ողջույններով են դիմավորում բոլշևիկյան լրագրի լույս ընծայումը։ Նրանք իրենց խնայած վերջին կոպեկները նվիրում են «Նոր կյանքի» օգտին և պարտավորվում «Գահել, պահպանել ու. խնամել նրան»[1]։

«Նոր կյանքն» իր առաջին իսկ համարից ուժեղ պայքար է սկսում դաշնակցության դեմ։ Թերթում հաճախակի զետեղվում են հոդվածներ ու փաստաթղթեր, որոնք մերկացնում են դաշնակների կոնտրռևոլուցիոն և հակադեմոկրատական գործունեությունը։

«Նոր կյանքը», — ասված է թերթի առաջին համարում տպագրված «Երկու խոսք դաշնակցության» թռուցիկի առթիվ» վերնագրով հոդվածում,— վճռական պայքար է մղելու հայ ժողովրդի գլխին տարիներ շարունակ պատուհաս դարձած և այսօր հայ գյուղացիության անունը շահագործող «Դաշնակցություն» կոչված խմբակցության դեմ, որի ղեկավարներն անպատասխանատու կերպով նոր արհավիրքների դուռն են բաց անում հայ մասսաների առաջ»[2]։

Մերկացնելով դաշնակների բուրժուա-նացիոնալիստական քաղաքականությունը, «Նոր կյանքը» ժողովուրդների եղբայրության ու ազգերի համերաշխության կոչ է անում։

«Բարձր բռնած բոլոր ազգությունների բանվորության և թշվառ գյուղացիության արյունաներկ ու կարմիր դրոշակը, «Նոր Կյանք»-ը գնալու է մարդկության լավագույն ապագայի, սոցիալիզմի անշեղ ուղիով» — ասված է թերթի առաջնորդողում։

«Նոր կյանքը» լայն ագիտացիա է ծավալում բոլշևիկյան լոզունգների համար։ Նա ռևոլուցիայի առաջին էտապից, նրա երկրորդ էտապին՝ սոցիալիստական ռևոլուցիայի անցնելու կոչ է անում։

«Հեղափոխական ու գիտակից բանվորությունը, ձեռք բերելով քաղաքական ազատություններ, չի կարող կանգ առնել իր կես ճանապարհին — ասված է «Նոր կյանքում»,— նա տանելու է դասակարգային կռիվը մարդկության լավագույն ապագայի. սոցիալիզմի համար, ունենալով մի նշանաբան. Պրոլետարներ բոլոր երկրների միացեք»[4]։

Պետրոգրադի պրոլետարիատի հուլիսյան դեմոնստրացիայից անմիջապես հետո, արձագանքելով այդ դեպքերին «Նոր կյանքը» գրում է.

«Հեռագրները մեզ հաղորդում են, որ Պետրոգրադում տեղի ունեցան խոշոր անցքեր։

... շարժումը կրում է հսկայական ծավալ... Փողոց են դուրս եկել հսկայական զորաբանակներ ... Դասակարգից դուրս է. որ ծածանվող դրոշակների վրա մակագրված «Կորչին տասը կապիտալիստ մինիստրները» լոզունգը հեղափոխական Ռուսաստանի առաջավոր բանվորության և գորքի պահանջն է հանդիսանում։

[1] «Նոր կյանք» 1917 թ. հունիսի 22 № 1.
[2] Նույն տեղում։
[3] Նույն տեղում։
[4] «Նոր կյանք», 1917 թ., № 2.

Եվ հավոզված ենք խորապես, որ չկա ուրիշ ճանապարհ՝ ստեղծված դրությունից դուրս գալու, բացի այն, որ ամբողջ իշխանությունը անցնի Բ. Ջ. և Դ. խորհուրդների ձեռքը»[1],

«Նոր կյանքը» իր հուլիսի 16-ի առաջնորդողում մերկացնում է ժամանակավոր կոալիցիոն կառավարությանը, որը վարում էր պատերազմը շարունակելու, ժողովրդի դեմոկրատական իրավունքները վերացնելու և զենքի ուժով բանվորների ու զինվորների գլխին դատաստան տեսնելու քաղաքականություն։

Այս նույն առաջնորդողում «Նոր կյանքը» վճռականորեն հանդես է գալիս բոլշևիկների և նրանց առաջնորդ Լենինի նկատմամբ սկսված հալածանքների դեմ։

«Հակահեղափոխությունը բարձրացնում է իր գլուխը և սպառնում է մեծ ազատությանը,— ասված է առաջնորդողում։— Մենք փոթորիկ շարքերով ամենուրեք կՒրթանք դեպի հերոսական կռիվ։

Եվ մեր հարվածների տակ պիտի վերջնականապես գլորվին բոլոր մութ ուժերը, բոլոր պրովոկատորները։

Թող սոսկան մեր ուժի առաջ մեր բոլոր թշնամիները»։

«Նոր կյանքը» հետևողականորեն բացատրում է մասսաներին ժամանակավոր կառավարության օրոք դեռևս շարունակվող համաշխարհային պատերազմի իմպերիալիստական, թալանչիական բնույթը։ Նա ցույց է տալիս, որ այդ պատերազմը չի վերջանա առանց բուրժուազիայի տապալման։

«Կռիվ կռվի դեմ— ասված է թերթի հուլիսի 3-ի առաջնորդողում— կռիվ նրանց դեմ, որոնք այս կռվի պատճառը դարձան, որոնք ամեն տեղ, ամեն երկրի մեջ բանվոր մասսայի արյամբ են սնվում»։

«Նոր կյանքում» բազմաթիվ թղթակցություններ են տպագրվում բանվորների ու գյուղացիների ծանր դրության մասին, նրանց դասակարգային պայքարի մասին։

«Նոր կյանքը» խոշոր աշխատանք է կատարում նաև Պետրոգրադում, Բաքվում ու Թիֆլիսում լույս տեսնող բոլշևիկյան թերթերի բաժանորդագրությունը կազմակերպելու և այդ թերթերը տարածելու գործում։ 1917 թ. Ալեքսանդրոպոլում ստացվում էին «Պրավդա», «Սոցիալ-դեմոկրատ», «Կավկազսկի ռաբոչի», «Բանվորի կռիվ», Բաքվի «Սոցիալ-դեմոկրատ» (լույս էր տեսնում Ս. Շահումյանի խմբագրությամբ) և այլ բոլշևիկյան թերթեր։

Այս լրագրերում սիստեմատիկաբար տպագրվող՝ Լենինի, Ստալինի և նրանց աշակերտներ՝ Շահումյանի, Միկոյանի և մյուս ղեկավար բոլշևիկների հոդվածները կազմակերպում էին մասսաներին, ղեկավարում ու ուղղություն էին տալիս Ալեքսանդրոպոլի բոլշևիկների կազմակերպությանը։

Ագիտացիա ծավալելով բոլշևիկների ռևոլուցիոն լոզունգների շուրջը, «Նոր կյանքը» ձևավորում է Ալեքսանդրոպոլի և նրա գավառի բան-

---

[1] «Նոր կյանք», 1917 թ. հուլիսի 9, № 6, առաջնորդող հոդվածը։
[2] «Նոր կյանք», 1917 թ., № 8։
[3] «Նոր կյանք», 1917 թ. հուլիսի 2, № 4։

վորների, զինվորների և գյուղացիների դասակարգային գիտակցությունը, դաստիարակում, կազմակերպում է նրանց ու նախապատրաստում նոր մարտերի։

* * *

Շնորհիվ Ալեքսանդրոպոլի բոլշևիկների կազմակերպչական, ագիտացիոն ու պրոպագանդիստական եռանդուն գործունեության, բոլշևիզմի ազդեցությունը քաղաքի զինվորների ու բանվորների մեջ արագորեն աճում է։ Այս առանձնապես ցայտուն երևաց բոլշևիկների կազմակերպած ռադիո հավաքումարում և հուլիսի 9-ի միտինգի ժամանակ։

1917 թ. հուլիսի 3-ին Ալեքսանդրոպոլում տեղի է ունենում Կովկասյան բանակի հեռագրիչների հավաքումար, որին մասնակցում էին մոտ 50—60 պատգամավոր։

Որպես հիմնական զեկուցողներ հավաքումարում հանդես են գալիս բոլշևիկ Դ. Աթաբրեկյանը և մենշևիկ Ասրիբեկյանը։

Աթաբրեկյանն իր կրակոտ ու բովանդակալից զեկուցման մեջ մերկացնում է Ժամանակավոր կառավարության կոնտրոնոլուցիոն՝ գործունեությունը և ամենայն խստությամբ դատապարտում այդ կառավարությունը պաշտպանող էսեռներին ու մենշևիկներին։

Աթաբրեկյանի զեկուցման հիմնական թեզերը հանգում էին հետևյալին.

«... 1) Վստահություն չի կարելի հայտնել մի կառավարության, ուր ղեկավարող գերակշռող թիվը բուրժուազիային է պատկանում, իսկ բուրժուազիան երբեք չի կարող իր շահերի հակառակ պաշտպան կանգնել դեմոկրատիայի շահերին...

Կամ ամբողջ բուրժուական կամ ամբողջ սոցիալիստական մինիստրություն. կոմպրոմիս այդ երկու հակադիր դասակարգերի այժմ տեղի չպիտի ունենա։

2) Պատերազմի մասին բոլշևիկներն էլ միանալով «հաշտություն առանց անեքսիայի և կոնտրիբուցիայի, ազգերի ինքնորոշման իրավունքով» բանաձևին, հետևողական են, երբ պահանջում են հարձակում չդրծել։ Իմպերիալիստական պատերազմի համար չպետք է պրոլետարի կամ գյուղացու արյունը հոսի. բավական է միլիոնավոր զոհերը, զորքը թնդանոթի միս չէ. իսկ ամեն մի հարձակում կխլի նորից հազարավոր կյանքեր, գերմանական զորքի մեջ կարող է բարձրացնել ոգին, զենք ծառայել գերմանական իմպերիալիզմի ձեռքը խեղդելու գերմանական դեմոկրատական հեղափոխությունը, որի շունչը արդեն փչում է սահմանից. ուրեմն և երկրի իշխանությունը հանձնելու է կազմակերպված դեմոկրատիայի՝ Զ. Ի. և Դ. խորհուրդների ձեռքը»։[1]

Այս երկու հարցում էլ ճիշտ հակառակ տեսակետ է պաշտպանում մենշևիկ Ասրիբեկյանը։ Նա պնդում է, որ պետք է վստահություն հայտնել Ժամանակավոր կառավարությանը և ողջունել ռազմաճակատում հունիսի 18-ին նրա ձեռնարկած հարձակումը։

---

[1] «Նոր կյանք», 1917 թ. հուլիսի 9-ը № 6։

Համագումարում մենշևիկյան հայացքների պաշտպանությամբ հանդես են գալիս նաև էսեռների ներկայացուցիչ Տեր-Դասպարյանը ու դաշնակցական Տերտերյանը։ Վերջինս, ըստ սովորականի, փորձում է պրովոկացիա սարքել բոլշևիկների դեմ, սակայն համագումարի մասնակից զինվորները նրան դիմավորում են բողոքի սուլոցներով և դաշնակցության տխրահռչակ ներկայացուցիչը խայտառակ պարտություն է կրում։

Համագումարում հանդես եկած բոլշևիկ հռետորներն իրենց ելույթներում ջախջախիչ հարված են հասցնում մենշևիկներին ու էսեռներին, մերկացնում անգլո-ֆրանսիական իմպերիալիստների կամակատար Կերենսկու հրամանով ձեռնարկված հարձակման խայտառակ նպատակները և կոչ են անում՝ անողոք կռվի դուրս գալ ընդդեմ բոլոր երկրների հափշտակիչ ու արյունախում իմպերիալիստների։

Բոլշևիկներն առանձնապես խիստ ելույթներ են ունենում դաշնակցության դեմ, ցույց տալով, որ նա «շովինիզմի թույնով շաղախված մի կազմակերպություն է և սոցիալիզմի ու առաջադիմության կատաղի թշնամի»։

Բոլշևիկ հռետորների ելույթները հաճախակի ընդհատվում են համակրանքի ծափահարություններով ու վերածվում օվացիայի և ընդհակառակը՝ հակաբոլշևիկյան պարտիաների ներկայացուցիչներին համագումարը դիմավորում է արդար բողոքով։

Մի ամբողջ էջ նվիրելով ռադիո համագումարին «Նոր կյանքը» գրում է.— «...Նիստը փակվեց գիշերվա ժամը 2 և կեսին մեծ հետաքրքրության և բարձր տրամադրության մեջ, բոլշևիկների կատարյալ հաղթանակով»[1]։

Ալեքսանդրոպոլի բոլշևիկների էլ ավելի կատարյալ հաղթանակն էր հուլիսի 9-ի միտինգը։

Ստանալով Պետրոգրադի բանվորների ու զինվորների հուլիսերեքյան դեմոնստրացիայի արյունահեղ ճնշման լուրը, Ալեքսանդրոպոլի բոլշևիկները հուլիսի 9-ին կազմակերպում են կայազորի զինվորների ու քաղաքի բանվորության բազմամարդ միտինգ։ Միտինգում ելույթ ունեցող բոլշևիկ հռետորներն անվստահություն են հայտնում ժամանակավոր կառավարությանը և պահանջում խզել կապերը իմպերիալիստական բուրժուազիայից ու վարել ակտիվ խաղաղության քաղաքականություն։ Միտինգն այս ոգով հեռագիր է ընդունում և ուղարկում Պետրոգրադ՝ Սովետների համառուսական կենտգործկոմին։

Զգալով նսեմացնել հուլիսի 9-ի բոլշևիկյան միտինգի նշանակությունը, քաղաքի հակաբոլշևիկյան կազմակերպությունները հուլիսի 11-ին դուժարում են իրենց միտինգը և շտապում են հեռագրեր ուղարկել Կերենսկուն, Պետրոգրադի Սովետին ու Անդրկովկասյան Առանձին Կոմիտեի նախագահ Խաղաթովին։ Այդ հեռագրերի մեջ նրանք զրպարտում են բոլշևիկյան միտինգը և իրենց վստահությունն են հայտնում բանվորներին ու զինվորներին գնդակոծող ժամանակավոր կառավարությանը և անձամբ Կերենսկուն։

[1] «Նոր կյանք», 1917 թ. հուլիսի 9, № 6։
[2] «Հորիզոն», 1917 թ. հուլիսի 15, № 147։

Այս երկու միտինգները մի անգամ ևս ակնառու կերպով ցույց տվին այն խորը անդունդը, որ կար Ալեքսանդրոպոլի բոլշևիկների և էսեռ—մենշեիկյան, դաշնակցական կոնտրռևոլուցիոներների միջև։

Ալեքսանդրոպոլի բոլշևիկյան միտինգը Պետրոգրադի բանվորների ու զինվորների հուլիսյան ելույթի խոշոր արձագանքներից էր ամբողջ Անդրկովկասում։

Բոլշևիկների ազդեցությունն Ալեքսանդրոպոլում գնալով աճում է։ Ամրանում են նրանց շարքերը։ Մասսաներն ավելի ու ավելի են համախմբվում բոլշևիկների շուրջը։

Բոլշևիկյան աշխատանքների այս ընդհանուր վերելքն Ալեքսանդրոպոլում նրանց առաջ հրատապ խնդիր է դնում՝ կազմակերպչորեն պառակտվել մենշևիկներից և ձևավորվել ինքնուրույն բոլշևիկյան կազմակերպության մեջ։

* * *

Բոլշևիկների պարտիայի 7-րդ (ապրիլյան) կոնֆերանսից հետո, Լենինի և Ստալինի ուղղակի ցուցումներով Անդրկովկասի բոլշևիկները խզում են իրենց ձևական-կազմակերպչական կապերը մենշևիկների հետ և ստեղծում ինքնուրույն բոլշևիկյան կազմակերպություններ։ Այս իրականանում է սկզբում Թիֆլիսում (հունիսի 5-ին), իսկ ապա նաև Բաքվում, Բաթումում, Ալեքսանդրոպոլում և այլ վայրերում։

Ալեքսանդրոպոլի բոլշևիկների պառակտումը մենշևիկներից և նրանց ինքնուրույն կազմակերպության մեջ ձևավորվելը տեղի է ունենում 1917 թ. հուլիսի երկրորդ կեսին գումարված բոլշևիկների համաքաղաքային կոնֆերանսում, որը ՌՍԴԲ(բ)Պ ապրիլյան կոնֆերանսի որոշումների հիման վրա, Արվելաձեի առաջարկով բանաձև է ընդունում մենշևիկներից կազմակերպչորեն լրիվ խզվելու վերաբերյալ։

Կոնֆերանսն իր որոշումներում խիստ դատապարտում է մենշևիկների բացահայտ իմպերիալիստական ու կոնտրռևոլուցիոն քաղաքականությունը և կոչ է անում համախմբվել բոլշևիկների շուրջը։

Ալեքսանդրոպոլի բոլշևիկների այս առաջին, հիմնադիր կոնֆերանսը ընտրում է կոմիտե, իսկ վերջինս՝ բյուրո, որի մեջ մտնում են Պ. Արվելաձեն, Բ. Ղարիբջանյանը, Գ. Աթարբեկյանը և ուրիշներ։

Ալեքսանդրոպոլի բոլշևիկյան կազմակերպության բոլոր աշխատանքների ղեկավարությունն անմիջականորեն իրականացնում էր այս բյուրոն, որն իր ներկայացուցիչներն ուներ զորամասերում ու քաղաքում։

Բոլշևիկների ու մենշևիկների կազմակերպչական պառակտումից հետո, նրանց «մի թացյալ» օրդան «Նոր կյանք» թերթը դադարում է լույս տեսնելուց։ Ալեքսանդրոպոլի բոլշևիկները որոշում են հրատարակել մի նոր թերթ, որը կարողանար ագիտացիոն, պրոպագանդիստական ու կազմակերպչական լայն աշխատանք ծավալել Ալեքսանդրոպոլի շրջանում գտնվող զինվորների մեջ։ [1]

---

[1] Բոլշևիկյան թերթի հրատարակման պահանջն էլ ավելի է մեծանում Թիֆլիսում մենշևիկյան կառավարության կողմից բոլշևիկյան մամուլի ու գրականության բռնագրավման և Կովկասյան ռազմաճակատի հարավային շրջաններում (Ալեքսանդրոպոլ, Ղարս և այլն) բոլշևիկյան բազմաթիրաժ թերթի բացակայության հետևանքով։

Ալեքսանդրոպոլի բոլշևիկները, առանձին կազմակերպության մեջ ձևավորվելուց անմիջապես հետո, տպագրում են հատուկ բյուլետեն, որտեղ ամենայն սրությամբ գրվում է թերթ ունենալու անհրաժեշտության հարցը՝ հարձակման անցած կոնտրռևոլուցիայի դեմ պայքարելու համար։

«... Տպագիր խոսքը — ռևոլուցիոն դեմոկրատիայի ձայնը կարող է և պետք է խաղա ամենահսկայական գեր կոնտրռևոլուցիայի դեմ պայքարելիս...»— ասված է բյուլետենում։[1]

Հենց այսպիսի թերթ էլ նրանք ստեղծում են։

1917 թ. օգոստոսից Ալեքսանդրոպոլում սկսում է լույս տեսնել «Պրավդա ժիզնի» լրագիրը (շաբաթաթերթ)։

«Պրավդա ժիզնին» խմբագրում էր Ղ. Ղարիբջանյանը։ Այնտեղ սիստեմատիկաբար տպագրվում էին Լենինի կարևորագույն գործերը, զինվորների ու բանվորների թղթակցությունները և Ալեքսանդրոպոլի ղեկ-վար բոլշևիկների հոդվածները, որոնք մասսաներին ռևոլուցիոն մոբիլիզացիայի կոչ էին անում։

«Պրավդա ժիզնիի» առաջին համարի առաջնորդողում, մերկացնելով բուրժուական ու էսեռո-մենշևիկյան թերթուկների ստահոդ ագիտացիան և բնորոշելով բոլշևիկյան լրագրի նպատակները, Ղարիբջանյանը գրում է.

«Պրավդա ժիզնին» հավատարիմ մնալով իր կոչմանը, առանց որևէ աղավաղման կլուսաբանի ընթացիկ դեպքերը։ Լրագիրն իրեն նպատակ է դնում, անողոք պայքար մղել հաշտության և ռևոլուցիայի թշնամիների դեմ, կապիտալի և շահագործման ներկայացուցիչների դեմ»։[2]

«Պրավդա ժիզնին» լույս էր տեսնում զինվորների ու բանվորների բարոյական և նյութական օգնությամբ։ Նրա տիրաժն արագորեն աճում է։

Տարածվելով Կովկասյան ռազմաճակատի բազմաթիվ զորամասերում՝ «Պրավդա ժիզնին» բոլշևիկների կողմն էր նվաճում զինվորական լայն մասսաներին՝ ձևավորելով նրանց դասակարգային գիտակցությունը։

Զինվորներն ու բանվորները սիրում էին «Պրավդա ժիզնի» լրագիրը։ Նրանք իրենց ողջույններն էին ուղարկում և վերջին կոպեկները նվիրում սիրելի թերթին։

Ալեքսանդրոպոլի բոլշևիկների ինքնուրույն կազմակերպության մեջ ձևավորվելը և «Պրավդա ժիզնի» լրագրի լույս ընծայումը մեծ խանդավառությամբ է ընդունվում զինվորական ու բանվորական դիտակից մասսաների կողմից։ Նրանք ամենայն իրավամբ այս փաստերը դիտում են որպես մի վճռական քայլ բոլշևիկյան աշխատանքների հետագա ուժեղացման ուղղությամբ։

Ստեղծելով ինքնուրույն ու ամուր կազմակերպություն և ունենալով բավմատիրաժ թերթ, Ալեքսանդրոպոլի բոլշևիկները համառ մար-

[1] Երևանի նախկին Ռևոլուցիայի թանգարանում ցուցադրված նյութերից։
[2] ՀԿ(բ)Կ Կարտարխիվ, ֆ. 9, տետր 14, թ. 27-28։

տերով, նոր հաղթանակներ են տանում հակաբոլշևիկյան պարտիաների վերկացման և մասսաներին իրենց շուրջը համախմբելու գործում։

* * *

Ալեքսանդրոպոլի բոլշևիկների ինքնուրույն կազմակերպության մեջ ձևավորվելը զուգադիպում է քաղաքային դումայի ընտրությունների շրջանին։

Քաղաքային դումայի ընտրությունների ժամանակ Ալեքսանդրոպոլի բոլշևիկները հանդես են գալիս իրենց ինքնուրույն ցուցակով (№ 5) և ծավալելով նախընտրական լայն ագիտացիա՝ դիմում են բանվորներին և զինվորներին՝ կոչ անելով ակտիվորեն մասնակցել ընտրություններին և ձայն տալ բոլշևիկների օգտին։

Ընտրություններին իրենց առանձին ցուցակներով հանդես են գալիս նաև հակաբոլշևիկյան պարտիաների Ալեքսանդրոպոլի կազմակերպությունները՝ մենշևիկներն ու էսեռները (№ 1 ցուցակ), «Ժողովրդական ազատության» պարտիան (№ 2 ցուցակ), անպարտիական սոցիալիստները (№ 3 ցուցակ) և դաշնակները (№ 4 ցուցակ)։

Նախընտրական կամպանիայի շրջանում ուժեղ պայքար է գնում վերոհիշյալ տարբեր կազմակերպությունների և մասնավորապես բոլշևիկյան ու հակաբոլշևիկյան խմբավորումների միջև։

Ընկեր Ստալինը, խոսելով 1917 թ. մայիսին Պետրոգրադում տեղի ունեցող մունիցիպալ կամպանիայի (ռայոնական դումաների ընտրությունների) մասին նշում է, որ այդ ընտրությունների ժամանակ ծավալված պայքարը մղվում էր ոչ թե տեղական մունիցիպալ պահանջների, այլ հիմնական քաղաքական պլատֆորմների շուրջը։

«Արդեն առաջին նախընտրական ժողովները ցույց են տալիս,—գրում է ընկեր Ստալինը, — որ կամպանիայի մեխը ոչ թե մունիցիպալ «ռեֆորմն» է, ինքնըստինքյան, այլ երկրի ընդհանուր քաղաքական դրությունը։ Մունիցիպալ ռեֆորմը լոկ մի հենք է, որի վրա բնականաբար ծավալվում են հիմնական քաղաքական պլատֆորմները։

Եվ այդ հասկանալի է։ Այժմ, երբ պատերազմը երկիրը կանգնեցրել է քայքայման անդունդի առաջ, երբ բնակչության մեծամասնության շահերը պահանջում են ռևոլուցիոն միջամտություն երկրի ամբողջ տնտեսական կյանքի մեջ, իսկ ժամանակավոր կառավարությունը պարզապես անընդունակ է երկիրը փակուղուց դուրս բերելու,—ամեն տեսակ տեղական հարցերը, այդ թվում նաև մունիցիպալ հարցերը, կարող են հասկացվել ու լուծվել միայն պատերազմի ու հաշտության, ռևոլուցիայի ու կոնտրռևոլուցիայի ընդհանուր հարցերի հետ անխզելի կապակցությամբ։ Առանց ընդհանուր քաղաքականության հետ այդպիսի կապակցության մունիցիպալ կամպանիան կարող էր վերասերվել-վերածվել լվացարանները կլայեկելու և «լավ զուգարաններ շինելու» վերաբերյալ դատարկ շաղակրատության (տես պշտպանողական-մենշևիկների պլատֆորման)։

Ուստի բազմաթիվ պարտիական դրոշակների խայտաբղետ պատկերի միջով անխուսափելիորեն ճանապարհ են հարթելու կամպանի-

այի ընթացքում երկու հիմնական քաղաքական գծեր ռևոլուցիայի հետագա զարգացման կիծը և կոնտրռևոլուցիայի գիծը»։[1]

Նույն հիմնական քաղաքական երկու գծերի (ռևոլուցիոն և կոնտրռևոլուցիոն) պայքարը մենք տեսնում ենք նաև Ալեքսանդրոպոլում։

Օգտագործելով նախընտրական կամպանիան, Ալեքսանդրոպոլի բոլշևիկները լայն պայքար են ծավալում դաշնակցության, մենշևիկների, էսեռների և այլ հակարոլշևիկյան պարտիաների դեմ։

Նրանք անդադրում մերկացնում են վերջիններիս կոնտրռևոլուցիոն իսարեբայական քաղաքականությունը և վճռականորեն պահանջում տապալել ժամանակավոր կառավարությունը, վերջ տալ իմպերիալիստական պատերազմին։

Նախընտրական կամպանիայի շրջանում կոնտրռևոլուցիոն պարտիաները էլ ավելի են ուժեղացնում իրենց պրովոկացիոն կամպանիան բոլշևիկների դեմ։ Ռորձի են գրվում դեմոկրատիայի, կեղծիքի, ստի ու զրպարտանքի բոլոր միջոցները։ Բոլշևիկները մեղադրվում են «դավաճանության» «գերմանական լրտեսության» մեջ։ Ընտրական ցուցակները կազմելիս դիտմամբ բաց են թողնվում ռևոլուցիոն տարրերը։

Սակայն, շնորհիվ նախընտրական կամպանիայի հաջող անցկացման համար Ալեքսանդրոպոլի բոլշևիկների գործադրած եռանդուն ջանքերի, նրանք դումայում ստանում են 10 տեղ։

Ամփոփելով դումայի ընտրությունների արդյունքները, Ղարիբջանյանը «Կավկազսկի ռաբոչի» թերթում գրում է.

«Հուլիսի 31-ին ընտրական տոմսերի հաշվումը տվեց 11.771 ձայն։ Հինգ ընտրական ցուցակներից ստացել են.

1-ին ցուցակ (մենշ. և էսեռ. բլոկ.)	ընդամենը	2380	ձայն
2-րդ » — » «ժողովրդական ազատության պարտիա»	» — »	246	»
3-րդ » — » արտապարտիական սոցիալիստներ	» — »	265	»
4-րդ » — » «դաշնակցություն»	» — »	6971	»
5-րդ » — » բոլշևիկներ	» — »	1909	»

Այսպիսով, բլոկից դումա անցան 12 ձայնավոր։ Բոլշևիկները տվին 10 ձայնավոր, դաշնակցականները — 36, կադետները — 1, արտապարտ. սոցիալիստները — 1, ընդամենը 60 ձայնավոր։

...1909 ձայն; որ ստացել են բոլշևիկները, այդ 70 ամյա տատիկների և պառավյալ պապիկների ձայները չեն, որպիսի ձայներ ստացավ «ռևոլուցիոն» դաշնակցությունը։ 2000 ձայն — այդ գիտակից բանակի և քաղաքային չքավորության կամքն է, այսինքն այն տարրերի, որոնց վրա հենված կարելի է համոզված կերպով նայել ռևոլուցիայի ապագային»։[2]

Ընտրությունների հետևանքով Ալեքսանդրոպոլի քաղաքային դումայի մեջ, որպես պատգամավորներ (гласные) անցնում են բոլշևիկներ Գ. Արվելաձեն, Բ. Ղարիբջանյանը, Դ. Աթարբեկյանը, Շապովալենկոն և ուրիշներ։

Ալեքսանդրոպոլի բոլշևիկները դումայի ընտրություններին նայում էին ոչ թե որպես ինքնանպատակ մի բանի, այլ որպես քաղաքական

[1] Ի. Ստալին — երկեր հ. III, էջ 76—77։
[2] «Կավկազսկի ռաբոչի», 1917 թ., օգոստոսի 4, № 117։

պայքարի միջոցի, բանվորների և զինվորների կազմակերպման, դաստիարակման և լուսավորման միջոցի։ Նրանք դումա էին գնում մեկ հիմնական նպատակով՝ օգտագործել այն՝ մասսաների մեջ ռևոլուցիոն ագիտացիա մղելու և նրանց բոլշևիզմի շուրջը համախմբելու համար։ Քաղաքային դումայում Ալեքսանդրոպոլի բոլշևիկների ամբողջ գործունեությունը ցույց է տալիս, որ նրանք հետևողականորեն և հաջողությամբ իրականացնում են իրենց այս նպատակները։

1917 թ. օգոստոսի 23-ին, նախկին առևտրական դպրոցի գահլիճում բացվում է Ալեքսանդրոպոլի քաղաքային դումայի անդրանիկ նիստը, որին բացի պատգամավորներից մասնակցում էին նաև 300-ից ավելի քաղաքացիներ։ Այս նիստում դումայի հին կազմը հրաժարական է տալիս, որից հետո իրենց հայտարարություններով հանդես են գալիս նոր դումայի տարբեր ֆրակցիաների ներկայացուցիչները։ Բոլշևիկների կողմից ելույթ է ունենում Ղարիբջանյանը։ Ուշադրություն չդարձնելով դումայի մյուս ֆրակցիաների ներկայացուցիչների աղաղակներին, նա իր կրակոտ ելույթում մերկացնում է ժամանակավոր կառավարության քաղաքականությունը և հաշտության ու կալվածատիրական հողերը կոնֆիսկացիայի ենթարկելու առաջարկ է անում։ Ղարիբջանյանը իր ելույթում ասում է, որ պատերազմն այն ժամանակ կվերջանա, երբ կառավարության ղեկն անցնի բանվորների, զինվորների ու գյուղացիների ձեռքը։[1]

Ղարիբջանյանից հետո ելույթ ունեցող էսեռական և մենշևիկյան ֆրակցիաների ներկայացուցիչներն իրենց հայտարարություններում սահմանափակվում են միայն ընդհանուր դիտողություններով և ֆրազարանությամբ, նրանք կոչ են անում համերաշխ գործել դաշնակների ֆրակցիայի հետ։[2]

Ալեքսանդրոպոլի քաղաքային դումայում բոլշևիկների ծավալած ակտիվ գործունեությունը էլ ավելի է բարձրացնում նրանց հեղինակությունը մասսաների աչքում։

*

1917 թ. օգոստոսի վերջերին, գեներալ Կոռնիլովի կոնտրռևոլուցիոն ելույթի շրջանում, բոլշևիկների պարտիան իր բոլոր ուժերը մոբիլիզացնում է կոռնիլովականների դեմ պայքարելու համար։

Գեներալական դավադրության դեմ պայքարելու կոչն ակտիվ արձագանք է գտնում նաև Ալեքսանդրոպոլում։

Օգոստոսի 29-ին տեղի է ունենում Ալեքսանդրոպոլի դումայի արտակարգ նիստը, որը բոլշևիկների ճնշման տակ ընդունում է նրանց առաջարկած բանաձևը և որոշում բոլոր միջոցներով պայքարել կոռնիլովշչինայի դեմ։ Այս նիստի մասին, դումայի՝ Թիֆլիս ուղարկած հեռագրում ասված է.

«Ալեքսանդրոպոլի քաղաքային դուման, օգոստոսի 29-ին արտակարգ նիստում՝ քննելով գեներալ Կոռնիլովի բացահայտ դավաճանական գործողությունների հետևանքով ստեղծված դրությունը, միաձայն որոշում է, որ բոլոր պարտիական ֆրակցիաները միավորվեն մեկ ռևոլուցիոն

[1] «Գրավդա ժիզնի», 1917 թ. № 1։
[2] Նույն տեղում։

ընտանիքի մեջ, ընդհանուր ուժերով, ընդհուպ մինչև բոլոր պատգամավորների և դումայի կողմից ներկայացված մասսաների կյանքի գնով՝ պաշտպանել հայրենիքը, ազատությունն ու ռևոլուցիան և արմատախիլ անել գեներալ Կոռնիլովի նման դավաճանների բոլոր կոնտրռևոլուցիոն հավակնությունները...»[1]

Կոռնիլովյան ագենտների հնարավոր ելույթները կանխելու համար, բոլշևիկների պահանջով, Ալեքսանդրոպոլում ստեղծվում է կոռնիլովշչինայի դեմ պայքարող արտակարգ հանձնաժողով, որի մեջ մտնում են տարբեր քաղաքական պարտիաների, դեպուտատների Սովետի գործադիր կոմիտեի, զինվորական կազմակերպությունների և քաղաքային դումայի ներկայացուցիչները։

Արտակարգ հանձնաժողովի աշխատանքները ղեկավարում էին Ալեքսանդրոպոլի բոլշևիկները Պ. Արվելաձեի և Դ. Աթաբեկյանի միջոցով։[2]

Քաղաքի բոլոր կարևորագույն վայրերում և զորամասերում արտակարգ հանձնաժողովը նշանակում է կոմիսարներ, որոնք պետք է կանխեին կոնտրռևոլուցիոն ելույթի ամեն մի փորձ։

Կոռնիլովշչինայի օրերին բոլշևիկ ագիտատորները շրջում էին քաղաքում ու զորամասերում և բնակչությանն ու զինվորներին բացատրում գեներալական դավադրության էությունը, նրա դավաճանական ձգտումներն ու նպատակները։ Նրանք դիմում էին մասսաներին, կոչ անելով սերտորեն կապվել բոլշևիկների հետ և տեղյակ պահել նրանց տեղի ունեցող բոլոր դեպքերին։

Շնորհիվ բոլշևիկների պարտիայի ձևոք առած միջոցների, կոռնիլովշչինան ջախջախվում է։

Ալեքսանդրոպոլի բոլշևիկները իրենց եռանդուն գործունեությամբ կանխում են կոռնիլովյան ագենտների ելույթների բոլոր փորձերը՝ քաղաքում և նրա շրջակայքում։

«Կոռնիլովշչինայի ջախջախումը ցույց տվեց,—ասված է պարտիայի պատմության համառոտ դասընթացում,—այնուհետև, որ բոլշևիկյան պարտիան աճել-դարձել է ռևոլուցիայի վճռողական ուժ, որն ընդունակ է ջախջախելու կոնտրռևոլուցիայի բոլոր ոտնձգությունները։ Մեր պարտիան դեռևս կառավարող պարտիա չէր, բայց կոռնիլովշչինայի օրերին նա գործում էր որպես իսկական կառավարող ուժ, որովհետև նրա ցուցումները բանվորներն ու զինվորները կատարում էին առանց տատանումների»։

Կոռնիլովշչինայի ջախջախումը բարձրացնում է բոլշևիկների հեղինակությունը մասսաների աչքերում, ամբողջ երկրում այդ թվում նաև գավառում։

Օգտագործելով այդ՝ Ալեքսանդրոպոլի բոլշևիկներն էլ ավելի են սրում պայքարը էսեռների, մենշևիկների և դաշնակների դեմ, որոնք իրենց ամբողջ քաղաքականությամբ օբեկտիվորեն օգնում էին Կոռնիլովի կոնտրռևոլուցիոն դավադրությանը։

1917 թ. սեպտեմբերի 19-ին Ալեքսանդրոպոլի քաղաքային դումայի

---

[1] ՀՍՍՌ ԿԿՆա. Պետարխիվ, Ֆ 41C/105, գ. 94, թ. 59։
[2] «222», 1917 թ., № 69։
[3] Համկ(բ) Պ պատմություն. Համառոտ դասընթաց, էջ 276։

հերթական նիստում, էսեռո-մենշևիկյան կառավարությունը մերկացնելու նպատակով, բոլշևիկներն առաջ են քաշում ռազմաճակատում մահվան պատիժը վերականգնելու մասին Կերենսկու տված հրամանին վերաբերմունք ցույց տալու հարցը։

Այս հարցի մասին դումայի բոլշևիկյան ֆրակցիայից ելույթ են ունենում Բ. Ղարիբջանյանը, Պ. Արվելաձեն և Շապովալենկոն։

Ղարիբջանյանը իր ելույթում մերկացնում է էսեռներին և նրանց լիդեր Կերենսկուն, որը Կոռնիլովի ուլտիմատումով 1917 թ. հուլիսի 12-ին ստորագրել էր ռազմաճակատում մահվան պատիժը վերականգնելու հրամանը և ցույց է տալիս, որ այն մտցված է ռևոլուցիայի դեմ պայքարելու համար։

«Մահվան պատժի ոգեշնչողները,— ասում է Ղարիբջանյանը,— այդ միջոցառման կիրառումը բացատրում էին բանակում քայքայումը կանխելու ձգտմամբ... Մինչդեռ... Մահվան պատիժը մտցնելու իսկական պատճառը բոլորովին այլ է։ Այդ ուղիով նրանք ցանկանում էին բանակը ենթարկել կոնտրռևոլուցիոն հրամանատարական կազմին և ստեղծել կոնտրռևոլուցիոն շարժման համար բարեհաջող պայմաններ, որոնց մասին Կոռնիլովը և բուրժուազիան վաղուց էին երազում։ Մենք՝ բոլշևիկներս, այդ շուտ էինք տեսել և ինչպես ժողովներում, այնպես էլ մամուլում բարձրաձայն նախազգուշացնում էինք դեմոկրատիային, բայց մեզ չէին հավատում և գերադասում էին վստահել կադետներին, որոնք մահվան պատիժն ստեղծել էին բուրժուազիայի հաղթանակը ապահովելու նպատակով»։[1]

Վերջացնելով իր ելույթը, բոլշևիկյան ֆրակցիայի անունից Ղարիբջանյանը քվեարկության է դնում հետևյալ բանաձևը.

«Ի նկատի ունենալով. 1) որ մահվան պատժի վերականգնումը ռազմաճակատում կոնտրռևոլուցիոն բարձր հրամանատարական կազմի ձեռքին մի զենք է բանակում ռևոլուցիոն տարրերի դեմ պայքարելու համար. 2) որ մահվան պատիժը կոնտրռևոլուցիոն բուրժուազիայի համար խոշոր մահափորձ է ռևոլուցիայի նվաճումների դեմ և 3) որ այդ միջոցառումը կիրառվում է ոչ թե կոնտրռևոլուցիան ճնշելու, այլ ռևոլուցիոն դեմոկրատիայի դեմ պայքարելու համար, Ալեքսանդրոպոլի քաղաքային դուման վճռականորեն արտահայտվում է վերականգնված մահվան պատիժը վերացնելու օգտին»։[2]

Բոլշևիկյան բանաձևի պաշտպանությամբ հանդես է գալիս Արվելաձեն։ Նա իր կրակոտ ելույթում մերկացնելով էսեռներին, դաշնակներին և մենշևիկներին, ուղղակի հայտարարում է, որ արտահայտվելով մահվան պատժի դեմ, բոլշևիկների նպատակն է մերկացնել բոլոր այն պարտիաներին, որոնք օժանդակել են մահվան պատժի վերականգնմանը։

«Մենշևիկներն ու էսեռները չէին հավատում մեր նախազգուշացումներին և իրենց բոլոր գործողություններով խաղալիք էին կոնտրռևոլուցիոն բուրժուազիայի ձեռքին։ Նրանք նույնիսկ խրախուսում էին մահվան պատիժը, որպես բանակում կարգապահությունը վերականգնելու նպատակահարմար միջոց, չգիտակցելով, որ իրականում նրանք այն մտցնում էին ոչ այդ նպատակով, այլ դիկտատուրայի հաստատման համար։ Մահվան պատիժը մտցվեց ոչ

[1] ՀՍՍՌ կենտ. Պետարխիվ ֆ. 105, գ. 107, թ. 47—48։
[2] Նույնը, թ. 48։

ПА-4077

այնտեղ, որտեղ պետք էր։ Փոխանակ ռազմաճակատում զինվորների համար վերակազմելու, ավելի շուտ այն հարկավոր էր վերականգնել դավաճանների համար»,[1]—ասում է Արվելաձեն։

Դուման վերոհիշյալ նիստը լայն արձագանք գտավ մամուլում։ Թերթերը միահամուռ կերպով վկայում են, որ բոլշևիկները իրենց ելույթներով դուման վերածել էին մի միտինգի և անխնա ու մերկացուցիչ ելույթներ էին ունենում (տես «ՉՉՉ», «Հորիզոն» և այլն)։

Ալեքսանդրոպոլի բոլշևիկները հմտորեն օգտագործելով ագիտացիոն, պրոպագանդիստական և կազմակերպչական աշխատանքի բոլոր միջոցները, ուղղում էին այն մի նպատակի՝ ազատել մասսաներին բուրժուա-նացիոնալիստական ու համաձայնողական պարտիաների ազդեցությունից և հավաքմբել նրանց բոլշևիկյան պարտիայի շուրջը։ Նրանք ամենօրյա հերոսական աշխատանքով, կոնտրոևոլուցիոն ուժերի դեմ մղվող պայքարում աստիճանաբար նվաճում էին մասսաներին և կազմակերպում իրենց ջոկատը այն ռևոլուցիոն քաղաքական բանակի, որն ստեղծում էին բոլշևիկները դասակարգային կռիվների ու ընդհարումների շրջանում 1917 թ. ապրիլից մինչև հոկտեմբերը «... Թե ապրիլյան մանիֆեստացիայի միջոցով, թե հունիսյան և հուլիսյան դեմոնստրացիաների միջոցով, թե շրջանային ու համաքաղաքային դումաների ընտրությունների միջոցով, թե կոռնիլովշչինայի դեմ պայքարելու միջոցով, թե Սովետները նվաճելու միջոցով»[2] (Ստալին)։

* * *

Բոլշևիկների պարտիայի 6-րդ համագումարը (1917 թ. հուլիսի 26—օգոստոսի 3) ռևոլուցիոն մասսաներին նպատակադրում է դեպի զինված ապստամբություն՝ ընդդեմ բուրժուազիայի և նրա ժամանակավոր կառավարության։

«Հենվելով պարտիայի 6-րդ համագումարի որոշումների վրա, Անդրկովկասյան բոլշևիկները ուժեղացնում են պայքարը հանուն Սովետների բոլշևիկացման, հանուն իշխանության նվաճման»։

1917 թ. հոկտեմբերի 2—7-ը ընկեր Ստալինի ցուցումներով և Ս. Շահումյանի ու Ա. Միկոյանի ղեկավարությամբ, Թիֆլիսում տեղի է ունենում Կովկասյան բոլշևիկյան կազմակերպությունների առաջին համագումարը, որը պարտիայի 6-րդ համագումարի որոշումների և զինված ապստամբության նախապատրաստվելու վերաբերյալ կենտրոնական կոմիտեի հրահանգներին համապատասխան կանգնում է պրոլետարիատի ու չքավորագույն գյուղացրության կողմից իշխանությունը գրավելու դիրքերում և բոլշևիկյան բանաձևեր է ընդունում ազգային, ագրարային, սահմանագիր ժողովին վերաբերմունք ցույց տալու և այլ հարցերի մասին։

Բոլշևիկների Ալեքսանդրոպոլի կազմակերպությունը, որն այս շրջանում ուներ մոտ 600 անդամ,[4] համագումար էր ուղարկել 2 դելեգատ, որոնցից մեկը Գ. Արվելաձեն էր։

---

[1] ՀՍՍՌ ԿԵՆԱ. Գետարխիվ, ֆ. 105, գ. 107, թ. 50։
[2] Ի. Ստալին— «Լենինիզմի հարցերը», Երևան, 1940 թ., էջ 120։
[3] „История гражданской войны в СССР", т. II; ОГИЗ, 1947 г., стр. 155.
[4] «Կավկազսկի ռաբոչի», 1917 թ. սեպտեմբերի 24, № 157։

Ակտիվ մասնակցություն ունենալով համագումարի ողջ աշխատանքներին, Արվելաձեն իր կրակոտ ելույթներով ամբողջովին պաշտպանում է բոլշևիկյան տեսակետները և անողոք կերպով հանդես է գալիս ամեն տեսակ հաշտվողականության դեմ։ Այդ ելույթներից մեկում, արտասանված ի պաշտպանություն Շահումյանի ու Միկոյանի առաջարկների՝ Սահմանադիր ժողովի ընտրություններին բոլշևիկների ակտիվ մասնակցությունն ապահովելու մասին, Արվելաձեն ասում է.

«Ընտրական կամպանիայի ժամանակ մեր խնդիրն է կազմակերպել մասսաներին ոևոլուցիոն պրոլետարիատի դրոշի շուրջը և անողոք պայքար մղել մենշևիկների ու էսեռների մանր բուրժուական պատրանքների դեմ։»[1]

Սահմանադիր ժողովի թեկնածուների ցուցակի մշակման վերաբերյալ համագումարն ընդունում է Արվելաձեի առաջարկած բանաձևը։

Կովկասյան բոլշևիկների անդրանիկ համագումարը հսկայական նշանակություն ունեցավ Կովկասի պարտիական կազմակերպությունների ամրապնդման գործում։ Համագումարն ընտրեց պարտիայի Երկրային Կոմիտե, որի մեջ մտան Շահումյանը, Միկոյանը և ուրիշներ։

Կովկասյան համագումարի աշխատանքները վերջանալուց անմիջապես հետո, 1917 թ. հոկտեմբերի 7-ին Շահումյանն Արվելաձեի ուղեկցությամբ գալիս է Ալեքսանդրոպոլ։

Բոլշևիկների Ալեքսանդրոպոլի կազմակերպությունը նախապատրաստական մեծ աշխատանք էր տարել Լենինի և Ստալինի հավատարիմ զինակցին և Անդրկովկասի բոլշևիկների սիրված ղեկավարին կազմակերպված ընդունելու համար։

Շահումյանի Ալեքսանդրոպոլում գտնվելու առաջին օրը՝ հոկտեմբերի 8-ը (կիրակի) հայտարարվում է բոլշևիկների օր, տարածվում է մարքսիստական գրականություն, տեղի են ունենում միտինգներ և բազմամարդ ժողովներ, որոնք ամենուրեք անցնում են բոլշևիկների ղեկավարությամբ։

Նույն օրը «Պրավդա ժիզնի» լրագիրը լույս է տեսնում առաջին էջում տպագրված հատուկ ագդով, որը հայտարարում է Շահումյանի գալուստն Ալեքսանդրոպոլ և քաղաքի բնակչությանը հրավիրում է ժողովրդական տուն լսելու բոլշևիկներ Ս. Շահումյանի և Ռ. Լարիրջանյանի դասախոսությունները Պետրոգրադի դեմոկրատական խորհրդակցության (դասախոս Շահումյան) և ընթացիկ մոմենտի ու խաղաղության (դասախոս Ղարիրջանյան) մասին։[3]

Հոկտեմբերի 8-ին Շահումյանն ընդարձակ ելույթ է ունենում բոլշևիկների կազմակերպած միտինգներից մեկում։ Այս մասին Ալեքսանդրոպոլի բոլշևիկյան կազմակերպության անդամ ընկեր Ռ. Լոգյանն իր հուշերում գրում է.

«1917 թ. հոկտեմբերի 7-ին ընկեր Շահումյանն Ալեքսանդրոպոլ եկավ։ Հոկտեմբերի 8-ին հայտարարվեց բոլշևիկների օր։ Այդ օրը կրկեսի շենքում մեծ բազմության առաջ ...Շահումյանը զեկուցեց Պետերբուրգի դեմոկրատական խորհրդակցության և ընթացիկ մոմենտի մասին։ Զեկուցման առթիվ ոչ մի ծպտուն դուրս չեկավ, կադետները, դաշնակները, նացիո-

[1] «Կավկազսկի ռաբոչի», 1917 թ., № 170։
[2] Նույն տեղում։
[3] «Պրավդա ժիզնի», 1917 թ. № 8։

նալիստական և այլ պարտիաների ներկայացուցիչները չնայած տեղերից անհանգստության նշաններ էին անում, բայց սիրտ չարին ելույթ ունենալ ...»։[1]

Ս. Շահումյանի ելույթներն ամենուրեք ընդունվում են ծափահարությունների բուռն տարափով։

Նույն օրը երեկոյան տեղի է ունենում շքեղ դրոսանք և տրվում է ռևոլուցիոն բովանդակությամբ մի ներկայացում, որը կազմակերպել էին Ալեքսանդրոպոլի բոլշևիկները։

Հաջորդ օրը, հոկտեմբեր 9-ին, առավոտյան ժամը 11-ին Ժողովրդական տանը բացվում է Ալեքսանդրոպոլի գավառի գյուղացիական համագումարը։

Համագումարի առաջին իսկ նիստում Թիֆլիսի գյուղացիական կենտրոնի անունից ելույթ է ունենում Շահումյանը։ Նա բանվորներին, զինվորներին և գյուղացիներին կոչ է անում միահամուռ կերպով համախմբվել բոլշևիկյան լոզունգների շուրջը։[2]

Գործելով Շահումյանի անմիջական ցուցումներով և նրա ղեկավարությամբ, գյուղացիական համագումարի բոլշևիկ դելեգատները համագումարում քննարկված բոլոր հարցերում հանդես են գալիս բոլշևիկյան բանաձևերով և իրենց ելույթներում մերկացնում են դաշնակների, էսեռների ու մենշևիկների տեսակետները ընթացիկ մոմենտի, ագրարային ու ազգային հարցերի վերաբերյալ։[3]

Ստեփան Շահումյանի և Ալեքսանդրոպոլի բոլշևիկների ելույթները համագումարի մասնակիցների վրա մեծ ազդեցություն են թողնում։

Երկու օր մնալով Ալեքսանդրոպոլում, Շահումյանը մեկնում է Թիֆլիս։ Նրա կրակոտ ելույթները և այն բազմամարդ ու խանդավառ միտինգները ու ժողովները, որ կազմակերպեցին բոլշևիկները Շահումյանի Ալեքսանդրոպոլում գտնվելու առթիվ, մասսաների ռևոլուցիոնականացման նոր խթան հանդիսացան։

Շահումյանի Ալեքսանդրոպոլում գտնվելը տեղի բոլշևիկյան կազմակերպության կյանքում խոշոր իրադարձություն էր։

Մոտիկից ծանոթանալով Ալեքսանդրոպոլի բոլշևիկյան կազմակերպության աշխատանքներին և մասսաների տրամադրության հետ, Շահումյանն Ալեքսանդրոպոլի բոլշևիկներին ցուցում է տալիս՝ բանվորների և զինվորների քաղաքային Սովետի ղեկավարությունը անհապաղ վերցնել իրենց ձեռքը։

* *

Ալեքսանդրոպոլի բոլշևիկները առաջիններից էին, որոնք անմիջապես արձագանքեցին Սովետների համագումարի հրավիրման համար պայքարելու մասին պարտիայի կենտկոմի կոչին։ Սովետների համառուսական հա-

[1] ՀԿ(բ)Պ ԿԿ Պարտարխիվ, Ֆ. 9. տես Բ. Լոգյանի հիշողությունները։

[2] «Հորիզոն», 1917 թ. հոկտեմբերի 39, № 227։

[3] «Հորիզոն», 1917 թ. №№ 230, 227, 230,232. «Արև», 1917 թ. №№ 224, 226, «Մարտիկ», 1917 թ. № 22։

մաղումար հրավիրելու և տեղական Սովետները վերընտրելու վերաբերյալ Սվերգլովի ստորագրած նամակը ստանալուց անմիջապես հետո, Ալեքսանդրոպոլի բոլշևիկները կազմակերպում են բանվորների ու զինվորների բազմամարդ ժողովներ, որտեղ զեկուցումներ են լսվում և բանաձևեր ընդունվում ի պաշտպանություն Սովետների համագումարի հրավիրման,

Ահա այդ ժողովներից մեկի որոշումը, որն ընդունվել է 1917 թ. հոկտեմբերի սկզբներին.

«222-րդ պահեստային հետևակային գնդի 9-րդ վաշտը լսելով ընկ. Շապովալենկոյի զեկուցումը ընթացիկ մոմենտի և սահմանադիր ժողովի ընտրությունների մասին, որոշեց.— բոլոր ուժերով պաշտպանել Պետրոգրադ քաղաքի Բ. Զ. Դ. Ս. որոշումը՝ հոկտեմբերի 20-ին Բ. Զ. և Գ. Դ. սովետների համառուսական համագումար հրավիրելու մասին, որը նպատակ ունի իշխանությունն ամբողջությամբ հանձնելու Բ. Զ. և Գ. դեպուտատների Սովետների ձեռքը. նաև նվիրում ենք 300 ռուբլի Սահմանադիր ժողովի ընտրությունների օգտին ...»[1]

Հակառակ Թիֆլիսի մի խումբ բոլշևիկների դավաճանական դիրքի, որի հետևանքով Անդրկովկասի բոլոր վճռական կենտրոններում (Բաքվից բացի) իշխանությունը Սովետներին հանձնելու համար մղվող պայքարը ձգձգվեց,[2] Ալեքսանդրոպոլի բոլշևիկները, իրականացնելով Շահումյանի ցուցումները, հոկտեմբերի կեսերին քաղաքի Սովետի ղեկավարությունը վերցնում են իրենց ձեռքը։

1917 թ. հոկտեմբերի 14-ին ռևոլուցիոն մասսայի պահանջով բանվորների ու զինվորների դեպուտատների Ալեքսանդրոպոլի Սովետի նախագահությունը մենշևիկ Ասրիբեկյանի գլխավորությամբ հրաժարական է տալիս։ Հաջորդ օրը՝ հոկտեմբերի 15-ին, տեղի է ունենում Սովետի ընդլայնված նիստ՝ մասնակցությամբ 200 դեպուտատների ե մասսաների տարբեր խավերի բազմաթիվ ներկայացուցիչների։ Երբ բացվում է նիստը, Գ. Արվելաձեն բոլշևիկների անունից առաջարկում է օրակարգի մեջ մտցնել Սովետի վերընտրության հարցը, որովհեան նրա հին կազմը իր մեծամասնությամբ (էսեռո-մենշևիկյան) չէր արտահայտում ընտրողների տրամադրությունները։

Երկար վիճաբանություններից հետո, հակառակ էսեռների, մենշևիկների ու դաշնակների, ձայների մեծամասնությամբ (81 կողմ, 43 դեմ) անցնում է բոլշևիկների առաջարկը և ընդունվում է համապատասխան հրահանգ, վերընտրությունների մասին։

Բոլշևիկների այս առաջին հաղթանակին հաջորդում է երկրորդը։

Բանվորների ու զինվորների դեպուտատների Սովետի նիստի մասնակիցները ձայների ճնշող մեծամասնությամբ արտահայտվում են Սովետների համառուսական երկրորդ համագումարի գումարման օգտին։ Այս հարցի վերաբերյալ կրակոտ ելույթ է ունենում Բ. Ղարիբջանյանը։ Իր ճառում մանրամասնորեն խոսելով Սովետների համագումարի նշանակության ու նպատակների մասին, նա մերկացնում է էսեռների ու մենշևիկների կոնտրռևոլուցիոն վարքագիծը։ Ղարիբջանյանը իր ելույթը վերջացնում

[1] «Պրավդա մրգնի», 1917 թ. № 8.
[2] „История гражданской войны в СССР", т. 2, стр. 156.

է բուռն ծափահարությունների տարափի տակ։ Լենինն ու մենշևիկները հեռանում են նիստից։ Սովետների համառուսական երկրորդ համագումարի աշխատանքներին մասնակցելու համար ընտրվում է բոլշևիկ դելեգատ։ Մինչև Սովետի Գործկոմի վերընտրությունը, նրա նախագահի պարտաքանությունների կատարումը հանձնարարվում է Արվելաձեին։[1]

Ալեքսանդրոպոլի բանվորների ու զինվորների Սովետը՝ Բաքվի Սովետից հետո, ամբողջ Անդրկովկասում միակն էր, որը վերջինիս հետ միաժամանակ 1917 թ. Հոկտեմբերյան ռևոլուցիայի նախօրյակին, վճռականորեն արտահայտվեց ամբողջ իշխանությունը Սովետներին հանձնելու օգտին։

Այս Ալեքսանդրոպոլի բոլշևիկների խոշոր հաղթանակն էր, բանվորների ու զինվորների մեջ նրանց տարած հերոսական, ռևոլուցիոն աշխատանքի արդյունքը։

***

1917 թ. հոկտեմբերի 25-ին Պետրոգրադի բանվորները, զինվորները ու նավաստիները, բոլշևիկների պարտիայի ու նրա առաջնորդներ Լենինի և Ստալինի անմիջական ղեկավարությամբ, տապալում են ժամանակավոր կառավարությունը, հաստատելով սովետական իշխանություն։

Հոկտեմբերի 25—27-ը տեղի է ունենում Սովետների համառուսական 2-րդ համագումարը, որտեղ ընդունվում են դեկրետներ հաշտության ու հողի վերաբերյալ և կազմակերպվում է աշխարհում առաջին Սովետական կառավարությունը՝ Լենինի նախագահությամբ։

Պետրոգրադում սկսված պրոլետարական ռևոլուցիայի ալիքը արագորեն տարածվում է ամբողջ Ռուսաստանում, ընդգրկելով երկրի բոլոր ծայրամասերը։

Ընկեր Ստալինը «Անդրկովկասի կոնտրռևոլուցիոներները սոցիալիզմի դիմակի տակ» հոդվածում ցույց տալով Հոկտեմբերյան հեղաշրջման հսկայական ռևոլուցիոնականացնող նշանակությունը, գրում է.

«Հոկտեմբերյան ռևոլուցիան սուր կերպով փոխեց դրությունը։ Նա մեկ շարժումով տակնուվրա արեց բոլոր հարաբերությունները, դնելով իշխանությունը աշխատավոր դասակարգերի ձեռքն անցնելու հարցը։ «Ամբողջ իշխանությունը բանվորներին ու գյուղացիներին» կանչը որոտալից տարածվեց ամբողջ երկրով մեկ, ոտքի հանելով ճնշված մասսաներին։[3]

Սոցիալիստական ռևոլուցիայի լուրը Ալեքսանդրոպոլում ստացվում է հոկտեմբերի 27-ին, քաղաքի աշխատավորության ու զինվորական մասսաների մեջ առաջացնելով բուռն խանդավառություն և մեծ հրճվանք։

Հոկտեմբեր—Նոյեմբեր ամիսներին, Ալեքսանդրոպոլի բոլշևիկների ղեկավարությամբ տեղի են ունենում բազմամարդ միտինգներ ու ժողովներ, բաց են թողնվում կոչեր, որոնք միահամուռ կերպով ողջունում են սոցիալիստական ռևոլուցիան և՝ արտահայտելով բանվորների ու զինվորների անհողդողդ կամքը, խոստանում են կրծքով պաշտպանել ռևոլուցիայի նվաճումները։

---

[1] «Կավկազսկի ռաբոչի», 1917թ. հոկտեմբերի 24, № 181։
[2] ՏՆա ЦАОР. ф. 1235, д 8.
[3] И. Сталин – Сочинения, т. 4, стр. 53.

Նշելով Հոկտեմբերյան ռևոլուցիայի հսկայական նշանակությունը, Ալեքսանդրոպոլի բոլշևիկյան կոմիտեն նոյեմբերի սկզբներին, սահմանադիր ժողովի ընտրությունների առթիվ բաց թողած իր կոչերից մեկում գրում է.

«Ընկեր բանվորներ, զինվորներ և գյուղացիներ.

Հասավ բաղձալի ժամը։ Զինվորների ու բանվորների հաղթական գրոհով ընկավ Կիշկինների և Բուրիշկինների կառավարությունը։ Ընկավ ժողովրդի կարիքների նկատմամբ սպասումների ու ծաղրանքի կոալիցիոն քաղաքականությունը։ Կշտացած դատարկ «ընթրիքներից» ու գատկվա խոստումներից, խոսքերով ամեն ինչ ստանալով, բայց գործով ոչինչ, Պետրոգրադի կայազորը և պրոլետարիատը ապստամբվեցին ու մեկ հարվածով տապալեցին զառամյալ կառավարությունը, որն իրեն ծածկում էր «դեմոկրատիայի»պիտակներով ու ցուցանակներով։ Իշխանությունն անցել է Սովետների հավագումարին—զինվորների, գյուղացիների և բանվորների լավագույն ներկայացուցիչներին, որոնք ստեղծեցին ռազմառևոլուցիոն Կոմիտե և այդ նոր իշխանությամբ վճռականորեն գնում են դեպի հաշտություն, հող և հաց...

Ընկեր զինվորներ, ձեր պարտքն է պաշտպանել այդ մարդկանց, որովհետև միայն այդ դեպքում նրանք կարդարացնեն ձեր հույսերը՝ Ձեր կողմից հաշտություն, հող և ազատություն նվաճելու վերաբերյալ։

Բոլոր միջոցներով, ողջ ուժերով, ամբողջ ռևոլուցիոն եռանդով պաշտպանեցեք Սովետները. դուք ռևոլուցիայի ու ժողովրդի զավակներ, որովհետև միայն Սովետները հանձին Ժողովրդական Կոմիսարների, կարող են իրագործել աշխատավոր ժողովրդի կյանքում իրագործել ազատության, եղբայրության և հավասարության գաղափարները»։[1]

Հոկտեմբերյան ռևոլուցիայի հազթանակը հսկայական նշանակություն ունեցավ բոլշևիզմի ազդեցության աճման գործում։ Այս բանն Ալեքսանդրոպոլում ցայտուն երևաց Սահմանադիր ժողովի ընտրությունների ժամանակ։

Հայտնի է, որ բոլշևիկների պարտիան Սահմանագիր ժողովի ընտրություններին մասնակցում էր ժողովրդական միլիոնավոր մասսաներին իր շուրջը համախմբելու համար, որովհետև, ինչպես ասում է ընկեր Ստալինը «Սահմանադիր ժողովի գաղափարը ամենաժողովրդական գաղափարներից մեկն էր բնակչության լայն մասսաներում»։[2]

Դեռևս Հոկտեմբերյան ռևոլուցիայից առաջ, ՌՍԴԲ(բ) Պ կովկասյան առաջին համագումարը քննելով Սահմանադիր ժողովի ընտրություններին մասնակցելու հարցը. հատուկ բանաձև էր ընդունել, որով կոչ էր անում բոլոր կազմակերպություններին, ամենաեռանդուն պայքար մղել Սահմանադիր ժողովի ընտրությունների առթիվ։

Բոլշևիկների Կովկասյան Երկրային Կոմիտեի առաջադրված ցուցակով Սահմանադիր ժողովի թեկնածուներ էին գրանցված ընկ. ընկ. Զուգաշվիլին (Կորա, Ստալին), Շահումյանը, Չափարիձեն, Արվելաձեն (Ալեքսանդրոպոլից), Վ. Տերյանը և ուրիշներ։

---

[1] ՀԿ (բ) ՊԿԿ Պարտարխիվ, ֆ. 39, գ. 9, թ. 53։

[2] Ի. Ստալին—«Լենինիզմի հարցերը», Երևան 1940 թ., էջ 128։

Նախապատրաստվելով Սահմանադիր ժողովի ընտրություններին, Ալեքսանդրոպոլի բոլշևիկները նախընտրական լայն ագիտացիա ծավալեցին հօգուտ Հոկտեմբերյան ռևոլուցիայի նվաճումների պաշտպանության, հօգուտ սովետական կառավարության և նրա դեկրետների։

Ընտրությունների նախօրյակին բոլշևիկների Ալեքսանդրոպոլի կոմիտեն հրապարակում է մի ընդարձակ կոչ, որով դիմում է բանվորներին, զինվորներին և գյուղացիներին՝ հանդես գալ սովետական կառավարության պաշտպանությամբ և միահամուռ կերպով ձայն տալ բոլշևիկների կողմից առաջադրված № 5 ցուցակի թեկնածուների օգտին։

«Ում համար թանկ են ռեվոլուցիայի շահերը,—ասված է կոչում,—ով կողմնակից է ճնշվածների և տնանկների պաշտպանությանը, ով կողմնակից է գազան կապիտալիստների լծի տապալմանը՝ հօգուտ եղբայրական պատերազմի դադարեցման, ով ուզում է ազնվորեն և անկեղծ պաշտպանել բանվորների, զինվորների և գյուղացիների եղբայրական գաշինքը, նա թող պաշտպանի նրանց, ովքեր ոչ թե խոսքով, այլ գործով, ոչ թե ահից, այլ խղճի ժոռք կատաղի և անհավասար պայքար են մղում զինվորների, բանվորների և գյուղացիների համար։ Ունևոր դասակարգի կողմից հալածվածների շահերի պաշտպան այդպիսի մարտիկներ դուք կգտնեք բոլշևիկների պարտիայի կողմից Սահմանադիր ժողովի համար առաջադրված թեկնածուների № 5 ցուցակում»։[1]

Սահմանադիր ժողովի ընտրություններն Ալեքսանդրոպոլում սկսվեցին 1917թ. նոյեմբերի 12-ին։ Ընտրությունների արդյունքները ցույց տվին, որ քաղաքի կայազորի զինվորներն իրենց ճնշող մեծամասնությամբ գնում են բոլշևիկների հետևից։ Ընտրություններին մասնակցած 9316 զինվորից բոլշևիկների օգտին ձայն էին տվել 7311 հոգի, մինչդեռ մենշևիկները (№ 1 ցուցակ) ստացել էին 279 ձայն, էսեռները (№ 2 ցուցակ) 855 ձայն, դաշնակները (№ 4) 696 ձայն և այլն։

Այս ապացույց էր Ալեքսանդրոպոլի կայազորի զինվորների մեջ բոլշևիզմի ազդեցության արագ աճի (հիշենք, որ հուլիսի վերջերին Ալեքսանդրոպոլի քաղաքային դումայի ընտրությունների ժամանակ բոլշևիկները ստացել էին 1909 ձայն) և այն հերոսական աշխատանքի, որ կատարել էին բոլշևիկները զինվորական մասսաներին էսեռների, դաշնակների և մենշևիկների կոնտրռևոլուցիոն ազդեցությունից ազատագրելու գործում։

Հոկտեմբերյան ռևոլուցիայի հաղթանակի հետևանքով սկսված ռեվոլուցիոն նոր վերելքը, գնալով աճում է։ Նոյեմբեր ամսին գրեթե ամեն օր Ալեքսանդրոպոլում տեղի են ունենում միտինգներ և ժողովներ, որտեղ ընդունված որոշումներն ու բանաձևերը միահամուռ կերպով խոսում են բոլշևիկների պարտիայի և սովետական կառավարության նկատմամբ մասսաների մեջ եղած սիրո ու համակրանքի մասին։

Ահա այդ որոշումներից մեկը.

«Ալեքսանդրոպոլի պահեստային, դուքքային-ինտենդանտական պահեստի և նրան ենթակա արհեստանոցի զինվորներն իրենց լրիվ կազմով, 1917 թ. նոյեմբերի 15-ի ընդհանուր ժողովում որոշեցին.

[1] ՀԿ(բ)Պ ԿԿ Պարտարխիվ, ֆ. 39, գ. 9, թ. 53։

«Ամբողջովին պաշտպանել բանվորների, զինվորների և գյուղացիների դեպուտատների սովետներից կազմված ժողովրդական ժամանակավոր կառավարությունը, որը կանգնած է դարերով ճնշված բանվորական ու գյուղացիական ժողովուրդների պաշտպանության դիրքերում և պաշտպանում է նրանց շահերն ու կամքը։ Մենք պահանջում ենք, որպեսզի այդ դասակարգը երկիրը կառավարի առանց բուրժուական դասակարգերի ներկայացուցիչների մասնակցության, որոնք ձգտում էին ու ձգտում են բոլոր ուժերով և խորամանկությամբ օգտվել ժամենտից և իրենց ձեռքը վերցնել աշխատավոր ժողովրդի կառավարումն ու դրանով թույլ տալ հին ձևով հյութ քամելու նրանցից։ Ընկերներ, մենք պարտավոր ենք և պետք է ամուր համախմբվենք ժողովրդական ժամանակավոր կառավարության շուրջը՝ հանձինս բանվորների, զինվորների և գյուղացիների դեպուտատների Սովետների, ազատ քաղաքացու արիության ամբողջ ուժով պաշտպանել այդ կառավարությունը, որը միայն կկարողանա դուրս բերել երկիրը սովից, ստրկությունից և իմպերիալիստական պատերազմից։»[1]

Ալեքսանդրոպոլի բոլշևիկները խորը հավատով էին լցված դեպի Հոկտեմբերյան Սոցիալիստական Մեծ Ռեոլուցիայի գործի հաղթանակը։ Նրանք լավ գիտեին, որ «...ճնշված ժողովուրդների ազատագրության ուղին անցնում է Ռուսաստանում հոկտեմբերին սկսված բանվորական ռևոլուցիայի միջով... Որ Ռուսաստանի ժողովուրդների բախտը, իսկ առանձնապես հայ ժողովրդի բախտը, սերտորեն կապված է Հոկտեմբերյան ռևոլուցիայի բախտի հետ...», որ միայն Հոկտեմբերյան ռևոլուցիան «կկարողանա մինչև վերջը հասցնել Ռուսաստանի ժողովուրդների ազատագրության գործը։»[2]

1917թ. Հոկտեմբերյան Ռևոլուցիայի հաղթանակից հետո կարդացած իր դասախոսություններից մեկում («Մարքսիզմը և քաղաքական պայքարը») մերկացնելով Ռուսաստանում Սոցիալիստական ռևոլուցիայի «անհասունության» մասին էսեռո-մենշևիկյան զառանցանքները, Ղարիբջանյանը հայտարարում է, որ պրոլետարիատի դիկտատուրան և Սոցիալիստական Ռևոլուցիան «պրոլետարիատի ազատագրության միակ ուղին է, մարդկության վերածնվելու ուղին, դեպի նոր, ազատ, եղբայրական կյանքը»։[3]

Լի Մեծ Հոկտեմբերի հաղթանակի նկատմամբ ունեցած խորը հավատով, Ալեքսանդրոպոլի բոլշևիկները անձնվիրաբար կանգնում են Լենինի և Ստալինի կողմից ղեկավարվող առաջին բանվորա-գյուղացիական կառավարության պաշտպանության դիրքերում և կազմակերպում են ու գլխավորում աշխատավոր մասսաների պայքարը՝ Հայաստանում սովետական կարգեր հաստատելու համար։

Անդրկովկասի ռեակցիոն ուժերը բացարձակ թշնամական դիրք են բռնում դեպի Հոկտեմբերյան Սոցիալիստական Մեծ Ռևոլուցիան։ Ռևոլուցիայի հաղթանակից անմիջապես հետո նրանք կազմակերպում են իշխա-

[1] «Կավկազսկի ռաբոչի» 1917 թ. նոյեմբերի 30, № 212։
[2] *И. Сталин.*—«Сочинения», т. 4. стр. 25—26.
[3] *Б. Гарибджанов*—«Политическая азбука». 1918 г., Алек-поль, стр. 45.

նության իրենց օրգանները և կատաղի պայքար սկսում Սովետական իշխանության դեմ։ 1917 թ. նոյեմբերի 15-ին վրացական մենշևիկների, դաշնակների և մուսավաթիստների գլխավորությամբ ստեղծվում է Անդրկովկասյան կոմիսարիատը, իսկ մոտ երկու ամիս հետո՝ 1918 թ. փետրվարի 10-ին Անդրկովկասյան սեյմը, որոնք դեռևս մինչև Հոկտեմբերյան Ռևոլյուցիան գործող «Ազգային խորհուրդների» (վրացական, թուրքական, հայկական) հետ միասին կոնտրռևոլյուցիոն բլոկ են կազմում ուղղված Անդրկովկասի բանվորների և գյուղացիների դեմ։

«...Անդրկովկասի ունևոր դասակարգերը,—գրում է ընկեր Ստալինը 1918 թ. մարտին,—ակնբախ տեսան, որ Հոկտեմբերյան Ռևոլյուցիան և Սովետական իշխանությունը բերում են նրանց անխուսափելի մահ։ Պայքարը Սովետական իշխանության դեմ այդ պատճառով էլ դարձավ նրանց համար կյանքի ու մահվան հարց... Հանձին Անդրկովկասյան կոմիսարիատի և նրա «Սեյմական-ազգային» հավելուկների, մենք գործ ունենք Անդրկովկասի բանվորների ու գյուղացիների դեմ ուղղված ամենաչարանենգ-կոնտրռևոլյուցիոն բլոկի հետ»։[1]

Անդրկովկասի բոլշևիկները հենց սկզբից կանգնած լինելով Սովետական իշխանության պաշտպանության դիրքերում, հերոսական պայքար են ծավալում Անդրկովկասյան կոմիսարիատի, Անդրկովկասյան սեյմի և «Ազգային խորհուրդների» դեմ։

Այս պայքարին ակտիվ կերպով մասնակցում են նաև Ալեքսանդրոպոլի բոլշևիկները։

1917թ. նոյեմբերի 23-ին, Արվելաձեի և Ղարիբջանյանի ղեկավարությամբ Ալեքսանդրոպոլում գումարվում է 5000-անոց միտինգ, մասնակցությամբ քաղաքի կայազորի զինվորների և 39-րդ հետևակային դիվիզիայի[2] ներկայացուցիչների։ Միտինգը՝ լսելով բոլշևիկ հռետորների կրակոտ ճառերը, ընդունում է մարտական բանաձև, որը մերկացնելով Անդրկովկասյան կոմիսարիատի և հակաբոլշևիկյան պարտիաների կոնտրռևոլյուցիոն քաղաքականությունը զինվորներին կոչ է անում մինչև արյան վերջին կաթիլը պաշտպանել Ռուսաստանի սովետական կառավարությունը։

«Ելնելով պրոլետարական-գյուղացիական ռևոլյուցիայի իրական շահերից,—ասված է այդ բանաձևում,—և ի նկատի՝ ունենալով վերնախավերի ութամսյա կոալիցիոն քաղաքականության դառը փորձը, Ռուսաստանի ժողովուրդների կարիքների նկատմամբ նրանց սպասումների և ծաղրանքի քաղաքականությունը, երբ ամբողջապես անտեսվում էին բանվորական, զինվորական ու գյուղացիական ներքնախավերը—մենք այստեղի բոլոր մասնակիցներս վճռականորեն, միաձայն արտահայտվում ենք, որ.

1. Միակ իշխանությունը, որը մեզ ապահովում է կայուն խաղաղություն, ամբողջ հողով և լիակատար ազատությամբ—այդ Սովետների իշ-

[1] *И. Сталин.*—Сочинения, т. 4, стр. 53, 65.

[2] Այս դիվիզիան զինվորների բացասական ռևոլյուցիոն տրամադրությունների պատճառով անվանվում էր «39-րդ բոլշևիկյան դիվիզիա»։ Թիֆլիսում գտնված Ժամանակավոր կառավարության կոմիտեի հատուկ հրամանով, 39-րդ դիվիզիան Կովկասյան ռազմաճակատից տեղափոխվում է Կուբան, որտեղ դառնում է Հյուսիսային Կովկասի բոլշևիկների հուսալի հենարանը (տես И. *Разгон*—„Орджоникидзе и Киров и борьба за власть Советов на Северном Кавказе", ОГИЗ, 1941 г., стр. 89—95.

իանությունն է, հանձին նոր բանվորա-գյուղացիական կառավարության, որն այժմ առանց տատանումների ու դեմ ու դեն ընկնելու, իրագործում է ռևոլուցիոն և հետևողական քաղաքականություն...»[1]

Այնուհետև բանաձևում զինվորները միաձայն խոստանում են զենքը ձեռքերին պաշտպանել ժողովրդի իշխանությունը։

«Այդ իշխանությունը սաբոտաժի ենթարկելու կամ ձախողելու ուղղությամբ կատարված ամեն մի ոտնձգություն, ում կողմից էլ այդ լինի, մեր կողմից վճռական հակահարվածի կհանդիպի՝ մինչև այն թշնամի ուժերի ֆիզիկական չեզոքացումը, որոնք կխանգարեն ժողովրդական կոմիսարների վճիռների ու որոշումների կենսագործմանը...»։

Մերկացնելով բուրժուական ու մանր-բուրժուական պարտիաների կոնտրռևոլուցիոն վարքագիծը, բանաձևը կտրականապես պահանջում է Կովկասում ևս հաստատել սովետական իշխանություն.

«... Արմատապես մերժում ենք և բողոքում պաշտպանողականների և բուրժուական պարտիաների դեմ, որոնք ինչ որ ինքնանպատակ իշխանություն են հնարել Անդրկովկասում ռևոլուցիոն ֆրոնտի բաժանման և ռևոլուցիոն պրոլետարական-գյուղացիական իշխանությունից անջատվելու ճանապարհով։

... Կովկասում չի կարող կազմակերպվել այլ իշխանություն, բացի սովետականից։

Ը սրտե ողջունում ենք ժողովրդական կոմիսարների հրատարակած բոլոր դեկրետներն ու կարգադրությունները»։[2]

Վերջում բանաձևը պահանջում է անմիջապես խաղաղություն կնքել Կովկասյան ռազմաճակատում և կյանքում կիրառել բանվորա-գյուղացիական կառավարության դեկրետները։[3]

Խոր ատելությամբ լցված դեպի աշխատավոր ժողովուրդը ու ձգտելով ճնշել բանվորների և գյուղացիների ռևոլուցիոն ելույթները, Անդրկովկասյան կոմիսարիատն իր գործունեության առաջին իսկ օրերից սկսում է ստեղծել զինված բանդաներ, արյունալի ջարդեր կազմակերպելու համար։

Այս ջարդերի առաջին զոհերը դառնում են սովետական կառավարության և Գերմանիայի ու Ավստրիայի միջև զինադադարի վերաբերյալ համաձայնագիր կնքելուց հետո, Կովկասյան ռազմաճակատից վերադարձող ռևոլուցիոն զինվորները (Շամխորի դեպքերը և այլն)։

«Զինաթափ անելով ռազմաճակատից եկող ռուսական զինվորներին,— գրում է ընկեր Ստալինը,— և, այդպիսով, պայքարելով «արտաքին» ռևոլուցիոներների դեմ, Անդրկովկասյան կոնտրռևոլուցիոն կոմիսարիատը հույս ուներ միանգամից երկու նապաստակ սպանելու, մի կողմից նա ոչնչացնում էր լուրջ ռևոլուցիոն ուժը, ռուսական ռևոլուցիոն բանակը, որի վրա էլ գլխավորապես կարող էր հենվել երկրամասի բոլշևիկյան կոմիտեն, մյուս կողմից՝ նա այդպիսով ստանում էր «անհրաժեշտ» զենք՝ զինելու համար ազգային վրացական, հայկական և մուսուլմանական գնդերը, որոնք կազ-

1 «Կավկազսկի ռաբոչի», 1917թ. նոյեմբերի 30, № 212։
2 Նույն տեղում։
3 Նույն տեղում։
4 Նույն տեղում։

մում էին մենշևիկյան-կոնտրոնոլուցիոն կոմիսարիատի գլխավոր հենարանը...»[1]

Գործելով այսպիսի լարված պայմաններում, Ալեքսանդրոպոլի բոլշևիկները, որպես Կովկասյան ռազմաճակատի հանդուցակետերից մեկում գտնվող վճռական ուժ, մեծ աշխատանք են կատարում զինվորական մասսաների մեջ, ցույց տալով նրանց տեղի ունեցող քաղաքացիական կռիվների իսկական էությունը և մերկացնելով՝ Անդրկովկասյան կոնտրոնոլուցիոնների հակաժողովրդական քաղաքականությունը։

Այս շրջանում Ալեքսանդրոպոլի բոլշևիկյան կոմիտեն զինվորներին, բանվորներին և քաղաքացիներին ուղղված մի շարք թռուցիկներ և կոչեր է բաց թողնում, որոնք մասսաներին բացատրում են ամբողջ ճշմարտությունը ռևոլուցիայի, Սովետական իշխանության և Կովկասում տեղի ունեցող քաղաքացիական կռիվների մասին։

Ահա այդ կոչերից մեկը՝ հրապարակված 1917 թ. դեկտեմբերի 27-ին Բ. Ղարիբջանյանի ստորագրությամբ.

«Ընկեր զինվորներ, բանվորներ և քաղաքացիներ.

Այն օրվանից, երբ հաղթանակեց ռևոլուցիան իր օրգան բանվորագյուղացիական կառավարության հաղթանակով, դուրս սողացին սողունների պես իրենց որջերից կոնտրռեոլուցիայի բուրժուա-կալվածատիրական տարրերը, անողոք պայքար և քաղաքացիական պատերազմ հայտարարելով ռևոլուցիայի ուժերին, հույս ունենալով ջլատել դեմոկրատիայի ուժերը, արյան մեջ խեղդել ռևոլուցիայի նվաճումները և աշխատավոր մասսաների ճնշման և շահագործման վրա ստեղծել իրենց թագավորությունը, իրենց իշխանությունը։ Ազնվական-կոզակների, մահմեդական-ֆեոդալների շահերի համար թափվում է աղքատ գյուղացիների, բանվորների ու զինվորների արյունը, Կալեդինները և Դուտովները արյուն են թափում Հյուսիսային Կովկասում, Ելիզավ. նահանգի կոնտրոնոլուցիոն մահմեդական խաներն ու բեկերը՝ չցանկանալով բաժանվել իրենց հողերից, եղբայրասպան պատերազմի դրոշ են բարձրացրել ռուսների ու հայերի դեմ։ Այդ պատերազմը ազգային անմիաբանության հողի վրա չի առաջացել, որովհետև աշխատավոր մահմեդական գյուղացիությունը և բանվորները գիտակցում են, որ ձրիակեր բեկերի ապստամբությունը ավելի շատ է ուղղված իրենց՝ այդ խանների, մահմեդական կալվածատերերի կողմից շահագործվող աշխատավորության դեմ։ Այսուհետև պայքար է մղվում աշխատանքի ու կապիտալի միջև, արտադրանք արտադրողների և այն յուրացնողների միջև։ Այդ պայքարը պահանջում է երկրի բոլոր աշխատավոր տարրերի, բոլոր ներքնախավերի միասնություն և դողում։ Տեղ չկա ազգային տարբերությունների և պարտիական բախումների համար։ Բոլորս որպես մի մարդ ի զեն, ի մահ, հանուն ռևոլուցիոն պատվի։ Բոլորս դեպի բանվորական կարմիր դվարդիա, բոլորս դեպի մերկացված ռազմաճակատ՝ ոչ թե պատերազմի, այլ հանուն խաղաղության, ոչ թե նեղույների նվաճման, այլ ժողովրդական ունեցվածքի պահպանման համար, ընդդեմ հափշտակումների, հանուն մարդու ֆիզիկական գոյության իրավունքի պաշտպանության...»[2]

---

[1] *И. Сталин*—Сочинения, т. 4, стр. 59.

[2] ՀԿ(բ) Կ ԿԿ Կարտարխիվ. Ֆ. 39, գ. 2, թ. 45։

Թուրքական ռազմաճակատից դեպի Հյուսիսային Կովկաս գնացող շատ զորամասեր շարժվում էին Ալեքսանդրոպոլի վրայով։ Հավատարիմ Անդրկովկասյան կոմիսարիատի վարած քաղաքականությանը, Ալեքսանդրոպոլի դաշնակները փորձում են հենց տեղում զինաթափ անել ռուս զինվորներին։ Այդ նպատակով նրանք դիմում են բռնությունների ու պրովոկացիայի։ Սակայն դաշնակներին չի հաջողվում իրագործել իրենց կոնտրռևոլուցիոն ժտադրությունները։ Ալեքսանդրոպոլ ժտնող և այնտեղից ժեկնող յուրաքանչյուր էշելոն ուղեկցվում էր բոլշևիկյան կոմիտեի հատուկ ներկայացուցիչներով, որոնք զինվորներին նախազգուշացնում էին սպառնացող վտանգի մասին և բոլշևիկյան ագիտացիա մղում նրանց ժեջ։

Այս դեպքերի ժասին ընկ. Ի. Լոգյանն իր հուշերում գրում է.

«Ռուսական 66 րդ դիվիզիան էշելոնով Պարսկաստանից վերադառնում էր Ռուսաստան։ Դաշնակցականները ցանկացան նրան զինաթափ անել։ Էշելոնը նախազգուշացված լինելով ժեր կողմից, Իայանդուր կայարանում կանգ առավ և նախապատրաստվեց դիմադրելու։

Իմանալով այդ, Ղարիբջանյանը ժեզանից մի քանի հոգու վերցրեց և ասաց. գնանք թույլ չտանք զինաթափ անեն։ Դա 1917թ. դեկտեմբերին էր, ձյուն։ Մենք գնացինք, տեսանք զինվորների ժոտ երկու սպանված ռուս զինվորների դիակ, որոնք սպանվել էին ինչ որ քրդերի հետ ունեցած ընդհարման ժամանակ։ Նախ կազմակերպեցինք այդ սպանված զինվորների թաղումը։ Թաղումը կատարվեց մեր կարմիր դրոշակներով։ Թաղմանը հետևեց դորքի ժեծ թափոր։ Այդտեղ, զորքի առաջ Ղարիբջանյանը հանդես եկավ ժեծ ճառով։ Զինվորները ժեծ դոհունակությամբ ու ցնծությամբ լսեցին Ղարիբջանյանի ճառը։ Ղարիբջանյանի այդ ճառը ժեծ տպավորություն թողեց զինվորների վրա։ Ղարիբջանյանի ղեկավարությամբ, ժենք կարողացանք այդ զորամասն անփնաս, ռևոլուցիոն տրամադրությամբ առգորված ճանապարհ դնել։ Գնալիս նրանք իրենց զենքերից Ալեքսպոլի բոլշևիկյան կազմակերպությանը նվիրեցին ժեկ հաստոցավոր գնդացիր (որը Ղարիբջանյանը ժեշոկի ժեջ դրած ինքն անձամբ շալակեց և տարավ իրենց կողմերը պահեց), 50 հատ հրացան և 40 ձեռքի նռնակ։»[1]

Ալեքսանդրոպոլի բոլշևիկների դորքի ժեջ տարած աշխատանքները խոշոր նշանակություն ունեցան վերջիններիս ռևոլուցիոն տրամադրությունները կազմավորելու գործում։ Այս զինվորները գնալով Հյուսիսային Կովկաս, այնտեղ ակտիվ դեր կատարեցին կոնտրռևոլուցիայի դեմ մղվող պայքարում։[2]

* * *

Պայքարելով Անդրկովկասյան Կոմիսարիատի և նրա բոլոր պաշտպանների դեմ, Ալեքսանդրոպոլի բոլշևիկները հանդես են գալիս Սովետական Ռուսաստանի կառավարության և Լենինի ու Ստալինի կողմից Կով-

1 ՀԿ(բ)Պ ԿԿ Պարտարխիվ, ֆ. 9. տես Բ. Լոգյանի հիշողությունները։

2 Ալեքսանդրոպոլից Հյուսիսային Կովկաս գնացող 66-րդ և 39-րդ դիվիզիաների ժասին տես *Н. Разгон*—„Орджоникидзе и Киров и борьба за власть Советов на Северном Кавказе", ОГИЗ, 1941 г. гл. II.

կասում արտակարգ կոմիսար նշանակված Ս. Շահումյանի գործունեության ներկ պաշպանությամբ։

Երբ 1918 թ. հունվարի 6-ին Համառուսական Կենտգործկոմը գեկրետ է ընդունում Սահմանադիր ժողովը, որպես կոնտրոնոլուցիոն մարմնի ցրելու մասին, հակառակ դաշնակների, էսեռների ու մենշևիկների սովետական կառավարության դեմ ուղղված ստոր դրպարտություններին, Ալեքսանդրոպոլի բոլշևիկները անմիջապես կազմակերպում են բանվորների և աշխատավորների բազմամարդ միտինգներ և հավանություն տալիս սովետական իշխանության այդ ռևոլուցիոն քայլին։

1918 թ. հունվարի 21-ին, Սահմանադիր ժողովի ցրման կապակցությամբ Ալեքսանդրոպոլում տեղի ունեցած միտինգներից մեկում ընդունված բանաձևում ասված է.

«Անհրաժեշտ էր Ժողովրդական Կոմիսարների այդ անգնահատելի քայլը հանդեպ մի այնպիսի մարմնի, որն իր կազմով ոչ միայն պաշտպան չի կարող հանդիսանալ բանվորության և չքավոր գյուղացիության, այլ և նույնիսկ նրանց մեծամասնության արտահայտիչը չէր»[1]

1918 թ. հունվարի 24-ին, Ալեքսանդրոպոլի ռուս քաղաքացիների ժողովում, որը գումարել էին տեղական կոնտրոնոլուցիոն իշխանությունները ռուսական ազգային խորհուրդ կազմակերպելու նպատակով, բոլշևիկներին հաջողվում է ժողովականներին իրենց կողմը գրավել և ընդունել սովետական իշխանությունը պաշտպանող բանաձև։ Այս մասին «Կավկազսկի ռաբոչի» թերթը գրում է.

«Հունվարի 24-ին Ալեքսանդրոպոլում տեղի ունեցավ ռուս քաղաքացիների ժողով, որը գումարվել էր ռուսական ազգային խորհուրդ կազմակերպելու նպատակով։ Ժամանակավոր նախագահությունը հայտնում է ազգային խորհրդի նպատակը։ Ազգային խորհուրդների խիստ քննադատությամբ ելույթ են ունենում մի շարք հոնտորներ բանվորներից և զինվորներից։ Վիճաբանությունների վերջում որոշվում է չճանաչել այդպիսի ինքնաստեղծ կազմակերպությունները, այլ ճանաչել միայն բանվորների, զինվորների և գյուղացիների Սովետը և Պետրոգրադի բանվորա-գյուղացիական կենտրոնական իշխանությունը»։

Բոլշևիկները հենց սկզբից դեմ են եղել բոլոր տեսակի ազգային խորհուրդներին, նրանք մասսաներին պարզաբանում էին, որ այդ խորհուրդները ոչ թե ազգային, ժողովրդական օրգաններ են, այլ ըստ էության բուրժուական ու կոնտրոնոլուցիոն և հակադրվում են բանվորների, զինվորների և գյուղացիների Սովետներին։ Դեռևս մինչև Հոկտեմբերյան Ռևոլուցիան, 1917 թ. սեպտեմբերին, հայոց ազգային խորհրդի կազմակերպումից անմիջապես հետո, Ալեքսանդրոպոլի բոլշևիկները միանգամայն ճիշտ դիրք բռնելով կոնտրոնոլուցիոն ուժերի համախմբման այդ օրգանի նկատմամբ, որոշում են բոյկոտի ենթարկել այն և մերկացնել հայոց ազգային խորհրդի դաշնակցական, հակաժողովրդական էությունը։ Նշելով Ալեքսանդրոպոլի բոլշևիկյան կազմակերպության այս հարցում ունեցած միան-

[1] «Բանվորի կոիվ», 1918 թ. № 23։
[2] «Կավկազսկի ռաբոչի», 1918 թ. փետրվարի 6, № 77

գամայն ճիշտ դիրքը, Ա. Միկոյանը 1917 թ. հոկտեմբերի 1-ին ՌՍԴԲ(բ)[1] Թիֆլիսի կոմիտեի անունից հայոց ազգային խորհրդի նախագահությանն ուղղված գրության մեջ հայտնում է.

«...Ռուսաստանի Սոցիալ-Դեմոկրատական Բանվորական Կուսակցությունը (բոլշևիկների) բոյկոտ է հայտարարել ազգային Խորհրդակցությանը և կարգադրել, որ իր բոլոր տնդամները նույնպես չմասնակցեն։ Համապատասխան ռեզոլուցիա ընդունել է Թիֆլ. կոմիտեն և տպել „Кавк. раб." և «Բանվորի կոիվ» թերթերում։

Նույնպիսի ռեզոլուցիաներ ընդունել են նաև Շուշու և Ալեքսանդրոպոլի մեր կազմակերպությունները։[2]

Ալեքսանդրոպոլի բանվորների և աշխատավորության ռևոլուցիոն տրամադրություններն առանձնապես ուժեղ արտահայտվեցին, երբ Անդրկովկասյան կոմիսարիատը որոշում ընդունեց Ս. Շահումյանին որպես Կովկասի գործերի Արտակարգ Կոմիսարի ձերբակալելու մասին։

Իմանալով կոնտրռևոլուցիոն կոմիսարիատի այս որոշման մասին, բոլշևիկները կազմակերպում են բողոքի բազմաթիվ միտինգներ։

1918 թ. փետրվարի 10-ին տեղի է ունենում Ալեքսանդրոպոլի կոշկակար բանվորների միտինգը, որը՝ մերկացնելով Անդրկովկասյան կոմիսարիատի կոնտրռևոլուցիոն քաղաքականությունը, բողոքի խիստ բանաձև է ընդունում նրա մի նոր ռեակցիոն քայլի՝ Շահումյանին ձերբակալելու մասին տրված հրամանի դեմ։

«Մենք կոշկակար բանվորներս,—ասված է այդ բանաձևում,—դրդված այն զգացմունքից, որ բռնություն է կատարվում մի այնպիսի անձնավորության վրա, որ իր ամբողջ կյանքը, իր բախտը կապել է մեր պրոլետարական շարժման ու ազատագրման հետ, մի այնպիսի մարդու որ մեր բանվորներիս ցանկությունների ու շահերի անկեղծ արտահայտիչն է եղել, մի այնպիսի անվեհեր մարտիկի, որ իր սեփական շահերը զոհելով մերին, իր երիտասարդական տարիների կարմիր օրերը խոնավ բանտերում, Նիկոլայի բռունցքի և ժանգոտած շղթաների ճնշման տակ է անցկացրել։ Ով դեմ է Շահումյանին, դեմ է մեզ պրոլետարներիս, որովհետև ընկեր Ստեփանն է, որ հասկանում է մեզ և խոսում է մեր լեզվով։ Ով դեմ է Շ., դեմ է ռուսական մեծ-հեզափ., կարմիր Պետերբուրգին, որովհետև նրանք են, որ նշանակել են Կովկասին ժամանակավոր կոմիսար, մինչև խորհուրդների գումարելը, որպեսզի երկիրը անարխիայի և հակահեղափոխության գրկից ազատեն։ Մենք Ալ. կոշկակարների արհեստանոցի բանվորներս, աշխարհով մեկ կոչում ենք—կորչի հակահեղափոխական կոմիսարիատը, կորչեն հեղափոխական սքեմ հագած խուլիգանները։

Կեցցե միջազգային սոցիալիզմը։

Կեցցե սրբազան ինտերնացիոնալը։

Կեցցե Կովկասի մարտական սոցիալիզմի ներկայացուցիչ ընկեր Ս. Շահումյանը։»

Ալեքսանդրոպոլի բոլշևիկներն անսահմանորեն սիրում էին Լենինի և Ստալինի մերձավոր զինակից Ս. Շահումյանին. նրանք խորապես հավա-

---

[1] ՀՍՍՌ ԿԵՆՏ. Պետարխիվ. Ֆ. 222, գ. 5, թ. 71։

[2] «Բանվոր», 1918 թ. մարտի 4, № 4։

տում էին Շահումյանի անհողդողդ կամքին, նրա նվիրվածությանը ռևոլուցիային։ Նրանց հիշողության մեջ դեռ թարմ էին այն կրակոտ ռևոլուցիոն ելույթները, որ ունեցել էր Շահումյանն Ալեքսանդրապոլում եղած օրերին։

* *

1917—18 թ. թ. ձմռանը, Ալեքսանդրոպոլի կայազորի բոլշևիկորեն տրամադրված զորամասերի և նրանց հետ միասին փորձված բոլշևիկ ընկերների (Արվելաձե և ուրիշներ) Հյուսիսային Կովկաս տեղափոխվելուց հետո, բոլշևիկների Ալեքսանդրոպոլի կազմակերպությունը, ղրկվելով իր անդամների դգալի մասից և կանգնելով նոր պայմաններում աշխատելու անհրաժեշտության առաջ. Կովկասյան Երկրային կոմիտեի ղեկավարությամբ կազմակերպչորեն վերակառուցվում է։ Ընտրվում է բոլշևիկյան նոր կոմիտե, որի մեջ մտնում են Բ. Ղարիբջանյանը (նախագահ), Ռ. Գրիգորյանը, Ռ. Սաֆարյանը և ուրիշներ։

Ելնելով ստեղծված նոր պայմաններից, Ալեքսանդրոպոլի բոլշևիկներն իրենց աշխատանքների ծանրության կենտրոնը տեղափոխում են քաղաքի բանվորների ու արհեստավորների մեջ։

Ալեքսանդրոպոլը, որն իր կայազորի զինվորների ռևոլուցիոն տրամադրությունների պատճառով բոլշևիկյան էր կոչվում, զորքի հեռանալուց հետո, գերազանցապես մանր-բուրժուական բնակչություն ունենալու հետևանքով, դառնում է դաշնակների գործունեության նպաստավոր վայր։ Անհրաժեշտ էր քաղաքի աշխատավորությանն ազատագրել դաշնակների և նրանց հետ բոլշևիկների դեմ ընդհանուր ճակատ կազմած մենշևիկների ու էսեռների ազդեցությունից, որոնք օգտվելով Անդրկովկասյան կոմիսարիատի բոլշևիկների դեմ սկսած ուժեղ հալածանքներից, փորձում էին աշխուժացնել իրենց աշխատանքները։

Ելնելով այս իրադրությունից, Ալեքսանդրոպոլի բոլշեիկները մեծ ուշադրություն են դարձնում ագիտացիոն ու պրոպագանդիստական աշխատանքներին։ Նրանք հաճախակի կազմակերպում են ժողովներ ու դասախոսություններ, որտեղ զեկուցումներ են լսվում ընթացիկ մոմենտի և պարտիայի պատմության առանձին հարցերի շուրջը։ 1918 թ. փետրվարին Ղարիբջանյանը կարդում է «Բոլշևիզմը և մենշևիզմը» թեմայով դասախոսությունը, Ոսկանյանը «Կոմունիստական մանիֆեստի 70-ամյակը», Սաֆարյանը՝ «Ազգարային հարցի մասին» և այլն։[1]

Ալեքսանդրոպոլի բոլշևիկների կազմակերպած այս դասախոսությունները բանվորներն ու աշխատավորությունը լսում էին մեծ հետաքրքրությամբ։ Խոսելով այս մասին, Թիֆլիսում լույս տեսնող բոլշևիկյան «Բանվոր» թերթը գրում է, որ գյուղացիները հաճախակի դիմում են բոլշևիկներին, խնդրելով իրենց համար ևս դասախոսություններ կազմակերպելու։[2]

Վերակառուցելով իրենց աշխատանքները Ալեքսանդրոպոլի բոլշևիկները ուժեղ պայքար են մղում ոչ միայն բացահայտ հակաբոլշևիկյան պարտիաների, այլև կոմունիստների անվան տակ թաքնված հայկուներների սպեցիֆիկյան, քայքայիչ գործունեության դեմ։

[1] «Բանվոր», 1918 թ. մարտի 6, № 5։
[2] Նույն տեղում։

1918 թ. հունվարին հայ ինտելիգենտների մի խումբ, Տուրգեն Հայկունու ղեկավարությամբ հաստատվելով Թիֆլիսում, սկսում են գործել որպես «Հայաստանի կոմունիստական պարտիա»։ Նրանք հիմնում են իրենց օրգան՝ «Կարմիր օրեր» թերթը և մեծ աղմուկով հանդես գալիս բոլոր հայ կոմունիստների անունից։ «Հայաստանի կոմունիստական պարտիայի» անդամները իրենց ամբողջ գործունեության ընթացքում, փնասակար ու քայքայիչ աշխատանք են տանում Կովկասյան բոլշևիկյան կազմակերպությունների մեջ։ Հայ բոլշևիկներին իրենց կողմը գրավելու համար նրանք փորձում են ստեղծել ինքնուրույն կազմակերպություններ, որոնք պետք է գործեին «Հայաստանի կոմունիստական պարտիա» դրոշի տակ՝ անկախ Ռուսաստանի կոմունիստական (բոլշևիկների) պարտիայից։

«Հայաստանի կոմունիստական պարտիա» խմբակի «...Զարգացման տենդենցները—գրում են Կովկասյան Երկրային Կոմիտեի անունից նրա անդամներ Ա. Միկոյանը, Գ. Ստուրուան և ուրիշներ,—դնացել են Անդրկովկասի հայ աշխատավորությանը ՌԿՊ առանձին նացիոնալիստական պարտիայի մեջ կազմակերպչորեն մեկուսացնելու նպատակով։ Այդ հիշեցնում է Հայ. Սոց. Դեմ. պարտիայի տխուր հիշատակը, որը հետագայում մեռցվեց ինտերնացիոնալ շարժման հարվածների տակ...»[1]

1918 թ. սկզբներին հայկունական ագիտատորները մուտք են գործում Ալեքսանդրոպոլ։ Նրանք հայտնում են տեղական բոլշևիկներին, որ իբր թե Ռ(բ)Կ Կենտկոմի որոշմամբ Հայաստանի սահմաններում պետք է աշխատի միայն Հայաստանի Կոմունիստական պարտիան, իսկ Ռ(բ)Կ ընդհանուր Կովկասյան կազմակերպությունները պետք է ցրվեն։[2]

Հավատարիմ մնալով իրենց հին դրոշին (ՌՍԴԲ(բ)Կ, իսկ 1918 թ. մարտից Ռ(բ)Կ Ալեքսանդրոպոլի կազմակերպություն) Ալեքսանդրոպոլի բոլշևիկները մերկացնում են հայկունականների սպեցիֆիկյան տենդենցները և շարունակում գործել Կովկասյան Երկրային Կոմիտեի անմիջական ղեկավարությամբ։ «Հայաստանի Կոմունիստական պարտիա»-ի նկատմամբ Ալեքսանդրոպոլի բոլշևիկների բռնած այս միանգամայն ճիշտ դիրքը լիակատար հավանություն է գտնում Կովկասյան Երկրային Կոմիտեի կողմից, որի անդամներ ընկ. ընկ. Միկոյանը, Ստուրուան և ուրիշներ, «Հայաստանի կոմունիստական պարտիա»-ի մասին Լենինին գրած զեկուցման մեջ, մերկացնելով հայկունականների «ավելորդ և փնասակար» (Միկոյան) գործունեությունը, նշում են նաև այդ հարցում Ալեքսանդրոպոլի բոլշևիկների վարած ճիշտ քաղաքականությունը։

«Տեղական կազմակերպություններում չունենալով ամուր գաղափարական հող, մասսաներից կտրված հիշյալ խումբը («Հայաստանի կոմունիստական պարտիան»—Գ. Ղ.),—գրում են նրանք,—դուրս է գտնվել որևէ հսկողությունից և զբաղվել է միայն նրանով, որ մոլորության մեջ է գցել մեր պարտիայի հայ անդամներին, իրեն կողմ է քաշել նրանց, այդպիսով քայքայելով ընդհանուր Կովկասյան կազմակերպության աշխատանքը։ Այդ խմբի կողմից նման աշխատանք տարվել է Թիֆլիսում,

[1] ՀԿ(բ)Կ ԿԿ Գրառարխիվ, ֆ. 1 (Լենին), գ. 3, թ. 80։
[2] ՀԿ(բ)Կ ԿԿ Գրառարխիվ, ֆ. 1, գ. 3, թ. 79։

Ալեքսանդրոպոլում, Ղարսում և Սուխումի շրջանում։ Ճիշտ է, անհաջող, շնորհիվ այն անձանց գիտակցության, որոնց դիմել է խումբը։[1]

Անդրկովկասի բոլշևիկները, ընկեր Միկոյանի անմիջական ղեկավարությամբ շուտով մերկացնում են «Հայաստանի կոմունիստական պարտիայի» անվան տակ գործող բախտախնդիր հայ ինտելիգենտուկների այդ խմբակի քայքայիչ գործունեությունը և ստիպում են նրանց դադարեցնել իրենց սպեցիֆիկյան աշխատանքները ու ցրվել։[2]

Պայքարելով ոչ միայն դաշնակների, մենշևիկների, էսեռների այլ նաև հայկունականների այն ժամանակ չափազանց վտանգավոր գործունեության դեմ, Ալեքսանդրոպոլի բոլշևիկները ստեղծում են ամուր կազմակերպություն, որը վերահաս թուրքական վտանգի դեմ հանդես է գալիս, որպես մասսաներին կազմակերպող ու ղեկավարող վճռական ուժ։

* * *

1918 թ. փետրվարին գերմանական իմպերիալիստները ընդհատելով սովետական կառավարության հետ կնքած զինադադարի վերաբերյալ համաձայնագիրը, հարձակման են անցնում և շարժվում մեր երկրի վրա։

«Գերմանական իմպերիալիզմը,— ասում է ընկեր Ստալինը,— Սովետական երկիրը ներխուժելով նպատակ էր դրել սովետական իշխանությունը տապալել ու մեր հայրենիքը իր գաղութը դարձնել։»[3]

Նույն նպատակներով և գերմանական զավթիչների հետ լիակատար համաձայնությամբ գործում է նաև թուրքական իմպերիալիզմը։

Թուրքական զորքերը 1918 թ. մարտի 3-ին հարձակման անցնելով գրավում են Բաթումը, Ղարսը և արագորեն շարժվում դեպի Անդրկովկասի կենտրոնական շրջանները, դեպի պրոլետարական Բաքու։ Այս օրհասական օրերին, Սովետական Ռուսաստանի՝ Գերմանիայի հետ կնքած Բրեստ-Լիտովսկի դաշնագրի պայմաններն ընդունելու փոխարեն, Անդրկովկասյան սեյմը զրպարտիչ կամպանիա է սկսում բոլշևիկյան պարտիայի դեմ և որոշում հաշտության ինքնուրույն պայմանագիր կնքել Թուրքիայի հետ։

Անդրկովկասյան կոնտրռևոլուցիոներները հակառակ աշխատավոր ժողովրդի կամքի ու ցանկության, չէին ուզում կանխել թուրքական զորքերի առաջխաղացումը։ Կանգնած լինելով Անդրկովկասում սովետական իշխանության հաստատման ռեալ սպառնալիքի առաջ, նրանք ձգտում էին օտարերկրյա սվինների ուժով վերացնել բոլշևիկյան վտանգը։

Միակ ուժը, որն իրոք կանգնում է ռևոլուցիոն Անդրկովկասը և Սովետական Ռուսաստանը գերմանա-թուրքական զավթիչներից պաշտպանելու գործի գլուխ, այդ Անդրկովկասի բոլշևիկներն էին։ Ընկեր Ստալինի անմիջական ցուցումներով նրանք կազմակերպում են «Ռևոլուցիայի

---

[1] ՀԿ(բ)Պ ԿԿ Պարտարխիվ Ֆ. 1, գ. 3. թ. 79։

[2] 1919 թ. գարնանը «Հայաստանի կոմունիստական պարտիա» խմբակի մի քանի ներկայացուցիչների (Հայկունի, Երեմյան և ուրիշներ) հաջողվում է վերականգնել իրենց գործունեությունը Մոսկվայում և խարերությամբ մասնակցել 3-րդ Ինտերնացիոնալի 1-ին կոնգրեսին։

[3] ՀԱՄԿ(բ)Պ Պատմություն. Համառոտ դասընթաց. Երևան, 1946 թ., էջ 297։

Պաշտպանության Կոմիտե», որի մեջ մտնում են Կովկասի Գործերի Արտակարգ Կոմիսար Ս. Շահումյանը, Կովկասյան բանակի ռազմա-ռևոլուցիոն կոմիտեի նախագահ Ռ. Կորգանովը, Բաքվի զինվորների և նավաստիների դեպուտատների ռայոնական Սովետի նախագահ Գ. Ջափարիձեն և ուրիշներ։

1918 թ. փետրվարի 26-ին Կովկասյան Երկրային Կոմիտեն դիմում է բանվորներին, գյուղացիներին և զինվորներին առաջարկելով կազմել սոցիալիստական կարմիր ջոկատներ և գուրս գալ պաշտպանելու ռևոլուցիան, Սովետական Կառավարությունը և Ժողովրդական Կոմիսարների Սովետը։[1]

Անդրկովկասի ռևոլուցիոն մասսաները բոլշևիկյան կազմակերպությունների ղեկավարությամբ, անմիջապես արձագանքում են այս կոչին։ Ամենուրեք սկսում են կազմակերպվել ռևոլուցիոն կարմիր գվարդիական ջոկատներ։

1918 թ. մարտին Ալեքսանդրոպոլի բոլշևիկյան կոմիտեն հատուկ կոչով դիմում է քաղաքացիներին, առաջարկելով նրանց մտնել կարմիր գվարդիայի շարքերը, ռևոլուցիոն հայրենիքը թուրքական զավթիչներից պաշտպանելու համար։

«Ընկերներ,—ասված է այդ կոչում։—

Ահավոր և կրիտիկական վայրկյաններ ենք ապրում։

Մեր ազատ քաղաքացիական կյանքը և գոյությունը վտանգված է։

Ռուսական սոցիալական բոնկումներից ահաբեկված, իմպերալիստների ոհմակը վճռել է ինչ գնով էլ լինի, խեղդել ռուսական հեղափոխությունը, որի նշանաբանն է հավասարություն, եղբայրություն և բոլոր ազգերի ազատ ինքնորոշումը։ Տաճիկ իմպերիալիստների բարբարոս հորդաները արդեն ներս են խուժել մեր ազատ հեղափոխական երկիրը։ Այդ բոլորի հանդեպ անտարբեր չէր կարող մնալ, անշուշտ, Ռուսաստանի հեղափոխության ավանգարդը կազմող՝ Ռուսաստանի Կոմունիստական (բոլշևիկների) Կուսակցությունը։

Հեղափոխության համար մեր ընկերների թափած արյունը մեզ վրա պարտք է դնում մինչև վերջին շունչը պաշտպանել ազատությունը և հեղափոխական հայրենիքը։

Հասել է վճռական ժամը։ Թուրքիան ուզում է ոչնչացնել արյունով ձեռք բերված ազատությունը։

Հեղափոխականի պարտքի և պատվի գիտակցությամբ բոլորս դիմենք դեպի ֆրոնտ։

Լերոհիշյալ նկատառումներով Ալեքսանդրոպոլի կոմունիստների (բոլշևիկների) կոմիտեն կոչ է անում բոլոր ընկերներին և համակրողներին անհապաղ մտնել նոր կազմվող հեղափոխական կարմիր Գվարդիայի շարքը՝ կռվելու իմպերալիզմի և լոնակալության դեմ, հանուն վտանգված հեղափոխության։

Անողոք կռիվ հեղափոխության թշնամիներին։

Ուրեմն, ընկերներ, դեպի գործ։ Ում համար թանկ է ազատությունն ու հեղափոխական հայրենիքը, թող շտապե ցուցակագրվել նոր կազմվող

[1] «Բանվոր» 1918 թ., մարտի 10։

«Կարմիր Գվարդիայի» շարքերում, որը հիմնված է փոխադարձ հարգանքի և հեղափոխական դիսցիպլինայի վրա։

Շտապենք, ընկերներ, հապաղելն հանցանք է»։[1]

Թուրքական զավթիչների դեմ պայքարելու կոչը կենդանի տրձագանք է գտնում Ալեքսանդրոպոլի բանվորների և աշխատավորության մեջ։ Բոլշևիկյան կազմակերպության գրասենյակը դառնում է ռևոլուցիոն ուժերի կազմավորման մարտական շտաբ։ Առավոտից մինչև ուշ երեկո այստեղ ցուցակագրվում, ձևավորվում ու զինվում էին Կարմիր գվարդիական ջոկատները։ Ընդամենը մի քանի օրվա ընթացքում Ալեքսանդրոպոլի բոլշևիկներին հաջողվում է ստեղծել մոտ 500 հոգուց բաղկացած ջոկատ, որի հիմնական կորիզը կազմում էին կոմունիստները։

Թուրքական ինտերվենտների դեմ մղվող պայքարի շրջանում բոլշևիկների ազդեցությունը մասսաների վրա էլ ավելի է աճում։

Այս բանը սարսափի մեջ է գցում Անդրկովկասյան կոնտրռևոլուցիոներներին, որոնք ամեն կերպ ձգտում էին ձախողել Կարմիր Գվարդիայի կազմակերպման գործը։ Թուրքական ռազմաճակատում իրենց հանցանքով տեղի ունեցող բոլոր անհաջողությունների մեղքը նրանք բարդում են բոլշևիկների վրա և կատաղի հալածանք սկսում վերջիններիս դեմ։

Ալեքսանդրոպոլի շրջանում մոլեգնում են դաշնակցական հրոսակախմբերը՝ խմբապետ Նժդեհի և ուրիշների գլխավորությամբ։ Մերձճակատային տերիտորիաները «ամրապնդելու» պատրվակով նրանք սկսում են պատժել, կոտորել և գնդակահարել թուրք և հայ խաղաղ բնակիչներին։ Թուրքական զավթիչների և դաշնակ խմբապետների կամայականություններից ֆիզիկապես ոչնչացվում են հայ ժողովրդի նորանոր մասսաներ։

Աշխատավորության հետագա ռևոլուցիոնականացումը կանխելու նպատակով, այսպես կոչված «Հայոց ազգային բանակի» հրամանատար գեներալ Նազարբեկովը, հայ ազգային խորհրդի անունից, պահանջում է ոչնչացնել բոլոր զինվորական կոմիտեները, վերականգնել սպաների իրավունքները կարգապահական պատիժներ կիրառելու վերաբերյալ և զրկել հասարակական ռևոլուցիոն կազմակերպություններին խառնվելու զինվորական իշխանությունների գործերին ու կարգադրություններին։

Այս կոնտրռևոլուցիոն միջոցառումները ուղղված էին աճող բոլշևիկյան տրամադրությունների և բոլշևիկների կողմից ղեկավարվող Կարմիր գվարդիայի դեմ։ Անդրկովկասյան ռեակցիոն ուժերը բացահայտորեն ձգտում էին օգտագործել թուրքական վտանգը կոնտրռևոլուցիայի դիրքերը ամրապնդելու, Անդրկովկասում սովետական կարգերի համար մղվող կռիվը վիժեցնելու և Սովետական Ռուսաստանի վրա թիկունքից հարձակվելու համար ռազմական պլացդարմ ստեղծելու նպատակով։ «Կոռնիլովի համար տեղ են պատրաստում Անդրկովկասում»—այսպես է բնորոշում իրերի վիճակը բոլշևիկյան «Բանվոր» թերթը։[2]

Այս հրեշավոր նպատակներն իրագործելու համար, Անդրկովկասյան սեյմը 1918 թ. ապրիլի 9-ին որոշում է ընդունում Անդրկովկասը Սովետական Ռուսաստանից անջատելու մասին։ Սեյմի ամենառեակցիոն և հա-

[1] ՀԿ(բ)Գ ԿԿ Գրքարանի, ֆ. 39, գ. 2, թ. 6։
[2] «Բանվոր», 1918 թ. մարտի 15, № 13։

կաժողովրդական այս քայլը, որը նշանակում էր Անդրկովկասի վերածումը օտարերկրյա իմպերիալիստների վասալի, հռչակվում է որպես Անդրկովկասյան «անկախ ֆեդերատիվ ռեսպուբլիկայի» ստեղծում։

Անդրկովկասյան սեյմի դավաճանական քաղաքականության հետևանքով, Թուրքական զորքերը շարունակում են առաջ շարժվել։ 1918 թ. մայիսի 15-ին նրանք մտնում են Ալեքսանդրոպոլ։

Ալեքսանդրոպոլի կարմիր գվարդիան, որին արգելվել էր ակտիվ մասնակցություն ունենալ քաղաքի պաշտպանությանը, ստիպված հանձնվում է դեպի Բաքու՝ այնտեղի սովետական իշխանությանը միանալու համար, սակայն անհաջողության հանդիպելով ցրվում է։

1918 թ. մայիսի 26-ին Անդրկովկասյան սեյմը լիկվիդացիայի է ենթարկվում։ Նույն օրը հայտարարվում է մենշևիկյան Վրաստանի «անկախությունը», իսկ ապա նաև ժուսավաթական Ադրբեջանինը (մայիսի 27-ին) ու դաշնակցական Հայաստանինը (մայիսի 28 ին)։

Այս բուրժուական ռեսպուբլիկաների անկախությունը լոկ ձևական բնույթ ուներ, փաստորեն նրանք գտնվում էին իմպերիալիստական պետությունների ազդեցության տակ։

«Այսպես կոչված անկախ Վրաստանի, Հայաստանի, Լեհաստանի, Ֆինլանդիայի և մյուսների այսպես կոչված անկախությունը,—գրում է ընկեր Ստալինը,—լոկ մի խարուսիկ երևույթականություն է, որը քողարկում է այդ թող ներվի ասել, պետությունների կատարյալ կախումն իմպերիալիստների այս կամ այն խմբից»։[1]

1918 թ. հունիսի 4-ին Բաքումում դաշնակցական պատվիրակությունը դաշինք է կնքում Թուրքական կառավարության հետ, իսկ հուլիսի 17-ին Թիֆլիսում կազմված Հայաստանի կառավարությունը և հայոց ազգային խորհուրդը, Թուրքերի ուղեկցությամբ գալիս են Երևան։ Հայաստանում սկսվում է դաշնակների տիրապետության շրջանը։

Տագաքական այս իրադարձությունների ժամանակ և նրանից հետո մինչև 1918 թ. դեկտեմբերի 5-ը, Ալեքսանդրոպոլը շարունակում է մնալ Թուրքական դավթիչների ծանր լծի տակ։

Ենթարկվելով Թուրքական զորքերի կատաղի հարձակումներին, բոլշևիկների Ալեքսանդրոպոլի կազմակերպությունը ժամանակավորապես դադարում է գործելուց։ Նրա դեկավար աշխատողների մի մասը, բոլշևիկյան կոմիտեի որոշմամբ, թողնում է քաղաքը։

Թուրքական օկուպացիայից ազատագրվելուց հետո Ալեքսանդրոպոլում բոլշևիկյան աշխատանքները նորից աշխուժանում են։ Սկսվում է բոլշևիկների Ալեքսանդրոպոլի կազմակերպության գործունեության մի նոր շրջան, կազմակերպչական ու տակտիկական բոլորովին այլ ձևերով ու մեթոդներով։

Հայաստանում սովետական կարգերի հաստատման և ամրապնդման համար մղված հերոսական պայքարի ժամանակաշրջանում Ալեքսանդրոպոլի բոլշևիկները ընթանում են Հայաստանի առաջավոր պարտիական կազմակերպությունների շարքերում։

[1] Ի. Сталин—Сочинения, т. 4, стр 383.